



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍԶՈՐՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ 07(347) «26» ապրիլի 2018թ.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

	<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
102	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 24-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 276-Ն որոշումը.....	3
103	«Առանձին կատեգորիայի ներհանրապետական փոխադրումների համար կատարված տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 9-ի N 407-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 277-Ն որոշումը.....	4
104	«Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» ԱՀ կառավարության N 287-Ն որոշումը.....	8
105	«Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացվելիք 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերի մասին» ԱՀ կառավարության N 288-Ն որոշումը.....	9
106	«Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 289-Ն որոշումը.....	14
107	«Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական	

	(արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 290-Ն որոշումը.....	20
108	«Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում 2018-2019 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտությունների ցանկը, անվճար և վճարովի ուսուցման տեղերը և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա և հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրով տեղերը՝ ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 291-Ն որոշումը.....	24
109	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 21-ի N 510 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 28-ի N 173 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 294-Ն որոշումը.....	30
110	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 91 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 295-Ն որոշումը.....	38
111	«Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 300-Ն որոշումը.....	45
<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>		
112	ԱՀ Գերագույն դատարանի քրեական գործ ԸԻԴ N 0090/01/17թ. որոշումը և հատուկ կարծիքը .....	48
113	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 2656/02/16թ. որոշումը.....	59

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

17 ապրիլի 2018թ.

N 276-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 168-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 24-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 150-րդ կետից հանել «և հարկային պետական ծառայության» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

17 ապրիլի 2018թ.

N 277-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՂՐՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՄԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 9-Ի N 407-Ն  
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ և 73-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Հաստատել առանձին կատեգորիայի ներհանրապետական փոխադրումների համար կատարված տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 9-ի «Մատաղիս-Ստեփանակերտ-Մատաղիս միջըրջանային ավտոբուսային կանոնավոր երթուղու սպասարկման համար ծախսված վառելիքի դիմաց փոխհատուցում տրամադրելու և փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 407-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

**Կ Ա Ր Գ**

**ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՊՐՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում է Արցախի Հանրապետության տարածքում առանձին կատեգորիայի փոխադրումներով ուղևորների և բեռների փոխադրման համար կատարված տրանսպորտային ծախսերի փոխհատուցման (այսուհետ՝ փոխհատուցում) ընթացակարգը և կարգավորվում դրանց հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով առանձին կատեգորիայի փոխադրում է համարվում փոխհատուցման ենթակա փոխադրումների ցանկում ընդգրկված՝ տնտեսավարող սուբյեկտների աջակցության կամ հանրապետության ռազմավարական նշանակության բնակավայրերում բնակչության տեղաշարժի ակտիվացման նպատակներով կազմակերպվող ներհանրապետական փոխադրումը:

3. Փոխհատուցումը տրամադրում և փոխհատուցման ենթակա առանձին կատեգորիայի ներհանրապետական փոխադրումների ցանկը յուրաքանչյուր տարվա համար հաստատում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված տրանսպորտային համակարգի պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ սույն կարգին համապատասխան:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Արցախի Հանրապետությունում տրանսպորտային փոխադրումներ (ուղևորների և բեռների փոխադրումներ) իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և համայնքների (այսուհետ միասին՝ կազմակերպություն) վրա:

5. Փոխհատուցումը տրամադրվում է փաստացի կատարված փոխադրումների համար, ամիսը մեկ անգամ, Արցախի Հանրապետության պետական բյուջեի կամ արտաբյուջետային հաշվի միջոցներից:

6. Փոխհատուցում տրամադրելու անհրաժեշտ այլ պայմանները սահմանվում են լիազոր մարմնի ու կազմակերպության միջև կնքված փոխհատուցման պայմանագրով:

**II. ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

7. Փոխհատուցման ենթակա առանձին կատեգորիայի ներհանրապետական փոխադրումների համար կատարված տրանսպորտային ծախսերը ստորաբաժանվում են հետևյալ տեսակների

- 1) վառելիք.
- 2) քուրքային նյութեր.
- 3) տեխնիկական սպասարկում և նորոգում.
- 4) անվադողերի մաշվածություն և նորոգում.
- 5) ամորտիզացիոն մասհանումներ.
- 6) հարկեր, տուրքեր և այլ սահմանված վճարներ.
- 7) վարորդի աշխատավարձ:

8. Սույն կարգով սահմանված ծախսերից բացի կարող է հաշվարկվել մինչև 30 տոկոս շահույթ:

9. Սույն կարգի 7-րդ կետում նշված ծախսերի տեսակներն ու 8-րդ կետում նշված շահույթի չափը ըստ փոխադրումների հաստատում է լիազոր մարմինը:

10. Վառելիքի ծախսի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{\text{H}}=0.01 \cdot H_{\text{s}} \cdot S \cdot A$$

որտեղ՝  $Q_H$  - վառելիքի ծախսն է,  
 0.01 - լիտրը կիլոմետրի հարաբերության գործակիցն է,  
 $H_s$  - վառելիքի ծախսի բազային նորման է (լիտր կամ մ<sup>3</sup>/100 կիլոմետր),  
 $S$  - տրանսպորտային միջոցի փաստացի կատարված վազքն է (կիլոմետր),  
 $A$  - մեկ լիտր վառելիքի շուկայական գինն է (ՀՀ դրամ):

11. Քսուքային նյութերի (շարժիչի, փոխանցման տուփի, տանող կամրջակի, հիդրավլիկ փոխանցումների համակարգի յուղեր և հովացման համակարգի հեղուկներ) ծախսերը հաշվարկվում են՝ էլնելով դիզելային կամ բենզինային վառելիքի ծախսից հետևյալ բանաձևով՝

$$Q_x = (Q_{\text{վ}} \cdot X / 100) \cdot A_{\text{քսք}}$$

որտեղ՝  $Q_x$  - քսուքային նյութերի ծախսն է (ՀՀ դրամ),

$Q_{\text{վ}}$  - վառելիքի ծախսն է (լիտր),

$X$  - վառելիքաքսուքային նյութի ծախսի նորման է (լիտր կամ կիլոգրամ) 100 լիտր վառելիքի ծախսի հաշվարկով, որը սահմանվում է արտադրող գործարանի կողմից կամ կիրառվում են հետևյալ նորմաները՝

Քսուքային նյութի անվանումը	Յուղերի (լիտր) և քսուքների (կգ) ծախսի նորմաները	
	բենզինային սնման համակարգով աշխատող շարժիչներ	դիզելային սնման համակարգով աշխատող շարժիչներ
Շարժիչային յուղեր	2,4	3,2
Տրանսմիսիոն յուղեր	0,3	0,4
Հատուկ յուղեր	0,1	0,1
Պլաստիկ (թանձր) յուղեր	0,2	0,3

$A_{\text{քսք}}$  - համապատասխան քսուքային նյութի միավորի արժեքն է (ՀՀ դրամ):

12. Տեխնիկական սպասարկման և նորոգման ծախսերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով 20 000 ՀՀ դրամ բազային թիվը յուրաքանչյուր 1000 կիլոմետր վազքի համար, և բազային թվի նկատմամբ կիրառվող հետևյալ գործակիցները՝

1) մինչև 8 տարվա (ներառյալ) արտադրությամբ ավտոտրանսպորտային միջոցների համար 1,0.

2) 8-ից մինչև 15 տարվա՝ 1,2.

3) 15-ից ավելի՝ 1,5:

13. Անվադողերի մաշվածության և նորոգման նորման որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$H_2 = 90 / H_{\text{վզք}}$$

որտեղ՝  $H_2$  - անվադողի մաշվածության վերականգնման ու նորոգման գործակիցն է,

$H_{\text{վզք}}$  - անվադողի շահագործական նորման է 1000 կիլոմետր վազքի հարաբերությամբ:

$H_{\text{վզք}}$ -ի նկատմամբ շահագործման պայմաններից ու առանձնահատկություններից էլնելով՝ ներհանրապետական փոխադրումներում կիրառվում են ուղղիչ K1 և K2 գործակիցները, որոնք համապատասխանաբար հավասար են 0,95-ի և 0,9-ի:

Դրամական ծախսը անվադողերի վերականգնման ու նորոգման համար որոշվում է՝

$$Z_{\text{անվ}} = 0.01 \cdot H_2 \cdot N_2 \cdot P_2 \cdot S / 1000$$

որտեղ՝  $Z_{\text{անվ}}$  - անվադողերի մաշվածության և նորոգման ծախսն է (ՀՀ դրամ),

$N_2$  - մեկ անվադողի արժեքն է (ՀՀ դրամ),

$P_2$  - անվադողերի քանակն է (հատ),

$S$  - տրանսպորտային միջոցի վազքն է (կիլոմետր):

14. Ամորտիզացիոն մասհանումների հաշվարկն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 6-ի «Պետական կառավարչական և այլ պետական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված՝ պետական սեփականություն

հանդիսացող հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարեկան նորմաները հաստատելու մասին» N 85 որոշմամբ հաստատված նորմաներին համապատասխան:

15. Հարկերի, տուրքերի և այլ սահմանված վճարների հաշվարկն իրականացվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով:

16. Վարորդի աշխատավարձը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A_w = N_{op} * 4000 + S * 30$$

որտեղ՝  $A_w$  - վարորդի ամսական աշխատավարձի չափն է (ՀՀ դրամ),

$N_{op}$  - ամսվա ընթացքում աշխատած օրերի թիվն է (օր),

$S$  - ամսական վազքն է (կիլոմետր):

### III. ՓՈՆԶԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

17. Կազմակերպությունը, համաձայն կնքված պայմանագրի, յուրաքանչյուր ամսվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին է ներկայացնում տեղեկություններ տվյալ ամսվա ընթացքում տեղափոխած ուղևորների կամ բեռի, տրանսպորտային միջոցի փաստացի կատարած վազքի և ծախսերի մասին՝ կցելով տրանսպորտային միջոցի ճանապարհային թերթիկը (թերթիկները):

18. Լիազոր մարմինը կազմակերպության կողմից ներկայացրած տեղեկություններն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ավտոկայարանային ծառայություններ մատուցող կազմակերպությունում ուղերթի գրանցված լինելու դեպքում այդ կազմակերպությունից, իսկ չգրանցվելու դեպքում՝ ուղերթի իրականացման վերջնակետում այն տնտեսավարող սուբյեկտից, որի համար իրականացվում է ուղևորների փոխադրումը, ստանում է նախորդ ամսվա ընթացքում կատարված ուղերթերի մասին տեղեկություններ և դրանց հիման վրա, անհրաժեշտության դեպքում, կատարում համապատասխան ճշգրտումներ: Ներկայացված տեղեկությունների ճշտությունը ստուգելու նպատակով լիազոր մարմինը կարող է այլ հավաստի աղբյուրներից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ:

19. Լիազոր մարմինը սույն կարգի 17-րդ և 18-րդ կետերում նշված տեղեկություններն ամփոփելով կազմում և Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում ֆինանսավորման հայտը կից փոխադրողի կողմից ներկայացված տեղեկություններով և (կամ) լիազոր մարմնի կողմից ճշգրտված հաշվարկներով:

20. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ներկայացված հայտի համաձայն, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական միջոցները տրամադրում է լիազոր մարմնին՝ կազմակերպությանը փոխհատուցում տալու նպատակով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱՐԳՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

18 ապրիլի 2018թ.

N 287-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ու մ է.**

1. 2018 թվականի ապրիլի 30-ի աշխատանքային օրը տեղափոխել 2018 թվականի մայիսի 5-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 ապրիլի 2018թ.

N 288-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է.**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացվելիք 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերի ցանկին համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

**Ց Ա Ն Կ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՅԱՌԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱՑՎԵԼԻՔ 2018-2019  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՌՀԱՏՈՒՑՄԱՍԲ  
(ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ  
ՎԱՐՁԻ ՍԱՄԱԿԻ ԶԵՂՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ  
ԱՆԸՆԴՅԱՑ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ**

Դասիչը	Բուհը, մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
<b>ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>			
022801.00.6	<b>Արևելագիտություն</b>		
	022801.02.6 Թյուրքագիտություն	1	-
023201.00.6	<b>Լեզվաբանություն</b>		
	023201.01.6 Թարգմանչական գործ /անգլերեն և հայերեն/	1	1
	023201.02.6 Միջմշակութային հաղորդակցություն /անգլերեն/	1	-
031501.00.6	<b>Մշակութաբանություն</b>		
	031501.01.6 Մշակութաբանություն	1	-
031801.00.6	<b>Միջազգային հարաբերություններ</b>		
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ	1	1
054101.00.6	<b>Երկրաբանություն</b>		
	054101.01.6 Երկրաբանություն	1	-
056101.00.6	<b>Մաթեմատիկա</b>		
	056101.01.6 Մաթեմատիկա	1	-
056802.00.6	<b>Ֆինանսական մաթեմատիկա</b>		
	056802.01.6 Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	2	-
061101.00.6	<b>Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)</b>		
	061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	1	-
101801.00.6	<b>Սերվիս</b>		
	101801.01.6 Սերվիս	1	-
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>11</b>	<b>2</b>
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>			
061901.00.6	<b>Տեղեկատվական անվտանգություն</b>		

	061901.01.6 Տեղեկատվական անվտանգություն	1	1
<b>071201.00.6</b>	<b>Շրջակա միջավայրի պահպանություն</b>		
	071201.01.6 Շրջակա միջավայրի պահպանություն	1	-
<b>071301.00.6</b>	<b>Էներգետիկա</b>		
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	1	-
<b>072401.00.6</b>	<b>Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում</b>		
	072401.01.6 Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	1	-
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>4</b>	<b>1</b>
<b>ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>			
<b>021201.00.6</b>	<b>Դիզայն</b>		
	021201.01.6 Դիզայն	1	-
<b>073101.00.6</b>	<b>Ճարտարապետություն</b>		
	073101.01.6 Ճարտարապետություն	1	1
<b>073102.00.6</b>	<b>Քաղաքային տնտեսություն</b>		
	073102.01.6 Քաղաքային տնտեսություն	1	-
	073102.02.6 Ջերմագազամատակարարում և օդափոխություն	1	-
<b>073201.00.6</b>	<b>Շինարարություն</b>		
	073201.02.6 Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրություն	1	-
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>5</b>	<b>1</b>
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>			
<b>041401.00.6</b>	<b>Շուկայագիտություն (մարքեթինգ)</b>		
	041401.01.6 Շուկայագիտություն (մարքեթինգ) /ըստ ոլորտի/	1	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1</b>	<b>1</b>
<b>Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>			
<b>011401.00.6</b>	<b>Մասնագիտական մանկավարժություն</b>		
	011401.08.6 Հասարակագիտություն	1	-
<b>092301.00.6</b>	<b>Սոցիալական աշխատանք</b>		
	092301.01.6 Սոցիալական աշխատանք	1	-
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>2</b>	<b>-</b>
<b>ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ</b>			
<b>021502.00.6</b>	<b>Կատարողական արվեստ</b>		

	021502.01.6 Գործիքային կատարողականություն -դաշնամուր -դուրուկ -ջազային գործիքներ	1 1 1	1 - -
	021502.04.6 Վոկալ արվեստ -ակադեմիական -ժողովրդական	1 1	1 1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>5</b>	<b>3</b>
<b>ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ</b>			
<b>021201.00.6</b>	<b>Դիզայն</b>		
	021201.03.6 Հագուստի մոդելավորում	1	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1</b>	<b>1</b>
<b>ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ</b>			
<b>021103.00.6</b>	<b>Կինոարվեստ</b>		
	021103.01.6 Կինոարվեստ	1	1
<b>021503.00.6</b>	<b>Թատերական արվեստ</b>		
	021503.01.6 Դերասանական արվեստ	1	-
	021503.02.6 Ռեժիսուրա	1	-
<b>021504.00.6</b>	<b>Պարարվեստի ռեժիսուրա</b>		
	021504.01.6 Պարարվեստի ռեժիսուրա	1	-
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>4</b>	<b>1</b>
<b>ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>			
<b>091201.00.7</b>	<b>Բուժական գործ</b>		
	091201.01.7 Բուժական գործ	10	3
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>10</b>	<b>3</b>
<b>ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ</b>			
<b>011401.00.6</b>	<b>Մասնագիտական մանկավարժություն</b>		
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	1	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1</b>	<b>1</b>
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>			
<b>072101.00.6</b>	<b>Պարենամթերքի տեխնոլոգիա</b>		
	072101.02.6 Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն	1	-
	072101.03.6 Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա	1	-
	072101.03.6 Գյուղատնտեսության և պարենային ապրանքի փայտեթավորման տեխնոլոգիա և դիզայն	1	-
	072101.04.6 Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա	1	-

	072101.06.6 Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա	1	-
	072101.07.6 Մսի և մսամթերքի տեխնոլոգիա	1	-
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>6</b>	<b>-</b>
<b>ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>			
<b>Հայկական բաժանմունք</b>			
<b>101501.00.6</b>	<b>Զբոսաշրջություն</b>		
	101501.01.6 Զբոսաշրջություն	1	1
<b>Ռուսական բաժանմունք</b>			
11.03.04	Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա	1	-
38.03.01	Տնտեսագիտություն	1	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3</b>	<b>2</b>
<b>ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b>			
<b>023201.00.6</b>	<b>Լեզվաբանություն</b>		-
	023201.04.6 Անգլերեն լեզու	1	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1</b>	<b>1</b>
	<b>ՊԱՀՈՒՍՏԱՑԻՆ ՏԵՂԵՐ</b>	<b>6</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐԸ</b>	<b>60</b>	<b>17</b>

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 ապրիլի 2018թ.

N 289-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Մահմանել, որ Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափը որոշում են Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

4. Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա անվճար տեղերի (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) տասը տոկոսը (առնվազն մեկ տեղ) ըստ մասնագիտու-

թյունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից գորացրված քաղաքացիներին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

**Ց Ա Ն Կ**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՒՉՍՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ**

**1. ԱՐՑԱՒԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
<b>011301.00.6</b>	<b>Ընդհանուր մանկավարժություն</b>		
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	10	20
<b>011401.00.6</b>	<b>Մասնագիտական մանկավարժություն</b>		
	011401.01.6 Կենսաբանություն	10	10
	011401.02.6 Քիմիա	5	10
	011401.03.6 Աշխարհագրություն	10	10
	011401.04.6 Ֆիզիկա	5	10
	011401.05.6 Մաթեմատիկա	10	10
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	7	18
	011401.11.6 Կերպարվեստ	5	10
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	7	18
	011401.18.6 Պատմություն	5	20
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	10	20
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	5	20
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	10	20
<b>031101.00.6</b>	<b>Տնտեսագիտություն</b>		
	031101.01.6 Տնտեսագիտություն	-	15
<b>031201.00.6</b>	<b>Քաղաքագիտություն</b>		
	031201.01.6 Քաղաքագիտություն	-	15



<b>031301.00.6</b>	<b>Հոգեբանություն</b>		
	031301.01.6 Հոգեբանություն	6	14
<b>032101.00.6</b>	<b>Լրագրություն</b>		
	032101.01.6 Լրագրություն	5	15
<b>041201.00.6</b>	<b>Ֆինանսներ</b>		
	041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	10	20
<b>042101.00.6</b>	<b>Իրավագիտություն</b>		
	042101.01.6 Իրավագիտություն	10	20
<b>041301.00.6</b>	<b>Կառավարում</b>		
	041301.01.6 Կառավարում /ըստ ոլորտի/	5	20
<b>061105.00.6</b>	<b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</b>		
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	10	20
<b>101501.00.6</b>	<b>Զբոսաշրջություն</b>		
	101501.01.6 Զբոսաշրջություն	-	20
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>5</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>150</b>	<b>355</b>

### 1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
<b>011301.00.6</b>	<b>Ընդհանուր մանկավարժություն</b>	
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	30
<b>011401.00.6</b>	<b>Մասնագիտական մանկավարժություն</b>	
	011401.01.6 Կենսաբանություն	20
	011401.03.6 Աշխարհագրություն	20
	011401.04.6 Ֆիզիկա	20
	011401.05.6 Մաթեմատիկա	20
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	25
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	25
	011401.18.6 Պատմություն	20
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	20
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	20
<b>041101.00.6</b>	<b>Հաշվապահական հաշվառում և հարկում</b>	
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	25
<b>042101.00.6</b>	<b>Իրավագիտություն</b>	
	042101.01.6 Իրավագիտություն	25
<b>053101.00.6</b>	<b>Քիմիա</b>	
	053101.02.6 Դեղագործական քիմիա	20
<b>061105.00.6</b>	<b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</b>	

	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	20
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>310</b>

**2. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ  
2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
<b>041801.00.6</b>	<b>Ագրոբիզնես</b>		
	041801.01.6 Ագրոբիզնես	7	18
<b>061105.00.6</b>	<b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</b>		
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	8	17
<b>071301.00.6</b>	<b>Էներգետիկա</b>		
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	5	15
<b>071403.00.6</b>	<b>Ռադիոտեխնիկա և կապ</b>		
	071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ	5	15
<b>071602.00.6</b>	<b>Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ</b>		
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	8	17
<b>072101.00.6</b>	<b>Պարենամթերքի տեխնոլոգիա</b>		
	072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	7	18
<b>073101.00.6</b>	<b>Ճարտարապետություն</b>		
	073101.01.6 Ճարտարապետություն	5	10
<b>073201.00.6</b>	<b>Շինարարություն</b>		
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	5	10
	073201.03.6 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում	5	10
<b>081101.00.6</b>	<b>Ագրոնոմիա</b>		
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	5	15
<b>084101.00.6</b>	<b>Անասնաբուծություն</b>		
	084101.01.6 Անասնաբուծություն	5	15
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>10</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>75</b>	<b>160</b>

**2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Բուժի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
<b>041801.00.6</b>	<b>Ագրոբիզնես</b>	
	041801.01.6 Ագրոբիզնես	15
<b>071601.00.6</b>	<b>Տրանսպորտային համակարգեր</b>	
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	15
<b>071602.00.6</b>	<b>Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ</b>	
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	15
<b>073201.00.6</b>	<b>Շինարարություն</b>	
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	15
<b>081101.00.6</b>	<b>Ագրոնոմիա</b>	
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և զենետիկա	15
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>75</b>

**2.3 ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտությունը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քուլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
		Հիմնական կրթությամբ	Հիմնական կրթությամբ
<b>0601</b>	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և առևտրիտ	10	10
<b>2401</b>	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում	10	10
<b>2916</b>	Քաղաքաշինական կադաստր	10	10
<b>3102</b>	Գյուղատնտեսագիտություն	10	10
<b>3104</b>	Անասնաբուժություն	10	5
<b>3106</b>	Գյուղատնտեսության մեքենայացում	10	5
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>10</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>70</b>	<b>50</b>

ԱՐՑԱՌԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 ապրիլի 2018թ.

N 290-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ղ ռ շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը համաձայն հավելվածի:

2. Մահմանել, որ Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է սովյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:

3. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

4. Մույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

5. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԿԱՆ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

**Ց Ա Ն Կ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
(ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝  
ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ  
ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՌՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ**

**1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՍԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵԶ**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը		Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման վճարովի) տեղերը	
		Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ	Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ
0402	Մանկաբարձական գործ	5	2	25	28
0405	Դեղագործություն	-	2	-	28
0406	Քույրական գործ	5	2	25	28
0418	Բուժական գործ զինված ուժերում	5	-	25	-
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>6</b>	<b>3</b>	<b>-</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>21</b>	<b>9</b>	<b>75</b>	<b>84</b>

**2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵԶ**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը
0501	Գործիքային կատարողական արվեստ այդ թվում՝	<b>17</b>	<b>7</b>
	դաշնամուր		
	լարային գործիքներ (ջութակ)		
	փողային գործիքներ		
	ժողովրդական գործիքներ		
0502	Երգեցողություն	3	6
0503	Երգչախմբավարություն	2	1
0504	Երաժշտության տեսություն	1	1
0505	Էստրադային երաժշտարվեստ	2	5
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>5</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>30</b>	<b>20</b>

3. ՇՈՒՇԻՒ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈՒԷԶ

3.1 ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը
		Հիմնական կրթությամբ	Հիմնական կրթությամբ
0514	Դիզայն ըստ ճյուղերի	10	10
0515	Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ	10	10
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում	5	10
2808	Հագուստի մոդելավորում և նախագծում	10	10
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>5</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>40</b>	<b>40</b>

3.2 ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը (միջնակարգ կրթությամբ)
2302	Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համայնքներում	15
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>15</b>

4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈՒԷԶ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը
0319	Պարի ուսուցում	10
0506	Դասական պար	10
	Ժողովրդական պար	10
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>30</b>

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԴԱՆ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ)
2014	Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում	15	10
2203	Համակարգիչների շահագործում	15	10
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում	15	10
2311	Հասարակական սնունդ	15	10
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)	15	10
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա	15	10
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>10</b>	<b>-</b>

	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>100</b>	<b>60</b>
--	-----------------	------------	-----------

**6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ)
2203	Համակարգիչների շահագործում	-	15	10
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում	15	15	10
2311	Հասարակական սնունդ	15	10	10
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)	15	10	-
2704	Գինեգործություն և հյուրերի արտադրություն	15	10	10
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	15	10	10
2905	Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում	15	10	-
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>100</b>	<b>80</b>	<b>50</b>

**7. ՇՈՒՇԻՒ «ԵԶՆԻԿ ՄՈԶՑԱՆ» ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ)
1003	Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	15	5
1006	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում	15	5
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և զծերի վրա	15	5
2311	Հասարակական սնունդ	15	5
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա	15	5
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	10	5
2902	Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում	15	5
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	15	5
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>5</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>120</b>	<b>40</b>

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 ապրիլի 2018թ.

N 291-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԶԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՊԵՏՐՈՍԻ ԿԼԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) Արցախի պետական համալսարանի 2018-2019 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտությունների, անվճար և վճարովի ուսուցման տեղերի ցանկը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա և հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրով տեղերն՝ ըստ մասնագիտությունների՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ



**Ց Ա Ն Կ**  
**ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ**  
**ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար ուսուցման տեղերը	Վճարովի ուսուցման տեղերը
Ա.01.01	Մաթեմատիկական անալիզ	1	1
Ա. 04.07	Կոնդենսացված վիճակի ֆիզիկա	1	-
Է.00.02	Համաշխարհային պատմություն	1	1
Ը.00.02	Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում	1	-
Ը.00.03	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	1	1
Ը.00.05	Հաշվապահական հաշվառում և վիճակագրություն	1	1
Ժ.01.02	Նորագույն շրջանի հայ գրականություն	1	-
Ժ.01.06	Ժուռնալիստիկա	1	-
Ժ.02.01	Հայոց լեզու	1	1
Ժ.02.07	Գերմանական լեզուներ	1	-
ԺԲ.00.03	Մասնավոր իրավունք /քաղաքացիական/	1	1
ԺԲ.00.04	Դատական իրավունք	1	-
ԺԲ.00.06	Միջազգային իրավունք	1	-
ԺԳ.00.01	Մանկավարժության տեսություն և պատմություն	1	1
ԺԳ.00.02	Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա /ըստ բնագավառների/	2	1
ԺԹ.00.05	Տարիքային և մանկավարժական հոգեբանություն	1	1
ԻԳ.00.01	Քաղաքական գիտության պատմություն և տեսություն	1	-
ԻԳ.00.04	Միջազգային հարաբերություններ	1	-
ԻԴ.00.02	Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն	1	1
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>20</b>	<b>10</b>

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ  
ԼՐԻՎ ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**1. ԱՐՑԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Առկա		Հեռակա
		Պետության կողմից ուսա- նողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուց- մամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վար- ձի մասնակի գեղջի կիրառ- ման իրա- վունքներով (վճարովի) տեղերը	Բուհի կող- մից ուսման վարձի մաս- նակի գեղջի կիրառման իրավունք- ներով (վճարովի) տեղերը
<b>011301.00.7</b>	<b>Ընդհանուր մանկավարժություն</b>			
	011301.01.7 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	5	10	-
	011301.03.7 Սոցիալա- կան մանկավարժություն	-	-	20
<b>011401.00.7</b>	<b>Մասնագիտական մանկավարժություն</b>			
	011401.04.7 Ֆիզիկա	3	7	-
	011401.05.7 Մաթեմատիկա	3	7	-
	011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	3	7	-
<b>022201.00.7</b>	<b>Պատմություն</b>			
	022201.02.7 Հայոց պատմություն	3	7	-
<b>023101.00.7</b>	<b>Հայոց լեզու և գրականություն</b>			
	023101.03.7 Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն	5	7	-
	023101.04.7 Հայ գրակա- նության պատմություն	3	7	-
<b>023102.00.7</b>	<b>Օտար լեզու և գրականություն</b>			
	023102.08.7 Ռուսաց լեզու	3	10	-

	023102.09.7 Անգլերեն լեզու	6	14	-
	023102.15.7 Ռուս գրականություն	3	7	-
<b>031201.00.7</b>	<b>Քաղաքագիտություն</b>			
	031201.01.7 Քաղաքագիտություն	3	7	-
<b>031301.00.7</b>	<b>Հոգեբանություն</b>			
	031301.01.7 Հոգեբանություն	3	7	-
<b>032101.00.7</b>	<b>Լրագրություն</b>			
	032101.01.7 Լրագրություն	3	7	-
<b>041101.00.7</b>	<b>Հաշվապահական հաշվառում և հարկում</b>			
	041101.02.7 Հաշվապահական հաշվառում և աուդիտ	5	10	10
<b>041201.00.7</b>	<b>Ֆինանսներ</b>			
	041201.01.7 Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	5	10	-
<b>041301.00.7</b>	<b>Կառավարում</b>			
	041301.01.7 Կառավարում	7	13	-
<b>042101.00.7</b>	<b>Իրավագիտություն</b>			
	042101.03.7 Քաղաքա- ցիական իրավունք և դատավարություն	3	7	-
	042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն	5	7	10
<b>051101.00.7</b>	<b>Կենսաբանություն</b>			
	051101.01.7 Կենսաբանություն	3	7	-
	051101.05.7 Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա	3	7	10
<b>053101.00.7</b>	<b>Քիմիա</b>			
	053101.02.7 Դեղագործական քիմիա	4	6	-
<b>054201.00.7</b>	<b>Աշխարհագրություն</b>			
	054201.01.7 Աշխարհագրություն	3	7	-
<b>061104.00.7</b>	<b>Տեղեկատվական համակարգեր</b>			
	<b>061104.03.7</b> Կառավար- ման տեղեկատվական համակարգեր	8	17	-
	<b>Պահուստային տեղեր</b>	13	-	-
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>105</b>	<b>195</b>	<b>50</b>

**2.«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Առկա		Հեռակա
		Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
<b>041801.00.7</b>	<b>Ազրոբիզնես</b>			
	041801.01.7 Ազրոբիզնես	3	10	10
<b>061105.00.7</b>	<b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</b>			
	061105.01.7 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	2	10	10
<b>071301.00.7</b>	<b>Էներգետիկա</b>			
	071301.03.7 Էլեկտրաէներգետիկա	2	10	-
<b>071601.00.7</b>	<b>Տրանսպորտային համակարգեր</b>			
	071601.03.7 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	2	10	10
<b>071602.00.7</b>	<b>Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ</b>			
	071602.01.7 Գյուղատնտեսության մեքենայացում	2	10	10
<b>072101.00.7</b>	<b>Պարենամթերքի տեխնոլոգիա</b>			
	072101.01.7 Պարենամթերքի տեխնոլոգիա	4	10	10
<b>073101.00.7</b>	<b>Ճարտարապետություն</b>			
	073101.01.7 Ճարտարապետություն	2	10	-
<b>073201.00.7</b>	<b>Շինարարություն</b>			
	073201.01.7 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	2	10	10
	073201.03.7 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում	2	10	10
<b>081101.00.7</b>	<b>Ազրոնոմիա</b>			
	081101.01.7 Ազրոնոմիա	2	10	10
<b>084101.00.7</b>	<b>Անասնաբուծություն</b>			
	084101.01.7 Անասնաբուծություն	2	10	-
	<b>Պահուստային տեղեր</b>	<b>5</b>	<b>-</b>	<b>-</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>30</b>	<b>110</b>	<b>80</b>

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 ապրիլի 2018թ.

N 294-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՔԵՐՈՒԱՅՆ ՔՈՔՍԻ ԱՆՎԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 510 ԵՎ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N 173 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Համաշխարհային Քրիստոնեական Համերաշխություն Վերականգնողական կենտրոն» պետական առողջապահական հիմնարկը պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 510 որոշման՝

1) 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) 2-րդ, 5-րդ և 8-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Համաշխարհային Քրիստոնեական Համերաշխություն Վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերով.

3) 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«3. Սահմանել, որ «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

1) վերականգնողական բուժում (բուժական ֆիզկուլտուրա, մերսում, ջրաբուժություն, աշխատանքային թերապիա, բուժքույրական խնամք, հոգեբանի և լոգոպեդի ծառայություն).

2) աջակցում և բուժում հանրապետության բոլոր այն հիվանդներին, ովքեր ունեն հենաշարժիչ, մկանային կամ նյարդային համակարգերի, ինչպես նաև

լեզվական այնպիսի բարդություններ կամ թերություններ, որոնք բերում են հաշմանդամության կամ տկարության.

3) տարբեր բնույթի մասնագիտական և ուսուցողական դասընթացների կազմակերպում հաշմանդամների համար.

4) հաշմանդամների հասարակության հետ ինտեգրացմանն աջակցում և նպաստում.

5) մասնագիտական վերականգնողական ուսուցման ապահովում հաշմանդամների համար.

6) աջակցում հաշմանդամներին՝ ունենալ աշխատանք կազմակերպությունում ձեռք բերած մասնագիտություններով.

7) ընտանիքի և հիվանդի ուսուցման կազմակերպում հաշմանդամությունը կամ դրա պատճառ հանդիսացող հիվանդությունը կառավարելի դարձնելու համար.

8) հաշմանդամային սպորտի զարգացում կազմակերպությունում և հանրապետությունում.

9) անմիջական կապերի ստեղծում աշխարհի նմանատիպ կազմակերպությունների և մասնագետների հետ՝ հետագա համագործակցության ակնկալիքով:

4. «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը թույլատրել իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները

1) ախտորոշիչ ծառայությունների կազմակերպում.

2) բուժական և կանխարգելիչ աշխատանքների կազմակերպում.

3) առողջ ապրելակերպի քարոզչության իրականացում.

4) հիվանդների սննդի կազմակերպում.

5) բժշկական կադրերի և միջին բուժանձնակազմի ուսուցման, վերապատրաստման և կատարելագործման կազմակերպում.

6) համակարգչային դասընթացների կազմակերպում.

7) ջրաբուժության և բուժական ֆիզկուլտուրայի դասընթացների կազմակերպում.

8) հոգեբանի և լոգոպեդի ծառայությունների կազմակերպում.

9) կազմակերպությունում հաշմանդամների կողմից ստեղծված արվեստի և արհեստի աշխատանքների իրացում:»:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Համաշխարհային Քրիստոնեական Համերաշխություն Վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերանվանելու մասին» N 173 որոշման 2-րդ կետը և կետով հաստատված հավելվածը ճանաչել ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**«ՔԵՐՈՂԱՅՆ ՔՈՔՍԻ ԱՆՎԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»**  
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է միայն առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնելու նպատակով:

2. Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Կազմակերպությունը ստեղծված է առանց ժամկետային սահմանափակման:

3. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4. Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

5. Կազմակերպությունը պետք է ունենա Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն ու անգլերեն անվանմամբ կլոր կնիք: Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

7. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

8. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

9. Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

10. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն»  
պետական ոչ առևտրային կազմակերպություն.

հայերեն կրճատ՝ «Ք. Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ.

ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация  
"Реабилитационный центр имени Керолайн Кокса".

ռուսերեն կրճատ՝ ГНКО "Реабилитационный центр им. К. Кокса".

անգլերեն լրիվ՝ State Non-Commercial Organization «Caroline Cox Rehabilitation Centre».

անգլերեն կրճատ՝ SNCO «Caroline Cox Rehabilitation Centre»:



11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Վ.Սարոյան 41ա:

## **II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

12. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) վերականգնողական բուժում (բուժական ֆիզկուլտուրա, մերսում, ջրաբուժություն, աշխատանքային թերապիա, բուժքույրական խնամք, հոգեբանի և լոգոպեդի ծառայություն)։

2) աջակցում և բուժում հանրապետության բոլոր այն հիվանդներին, ովքեր ունեն հենաշարժիչ, մկանային կամ նյարդային համակարգերի, ինչպես նաև լեզվական այնպիսի բարդություններ կամ թերություններ, որոնք բերում են հաշմանդամության կամ տկարության։

3) տարբեր բնույթի մասնագիտական և ուսուցողական դասընթացների կազմակերպում հաշմանդամների համար։

4) հաշմանդամների հասարակության հետ ինտեգրացմանն աջակցում և նպաստում։

5) մասնագիտական վերականգնողական ուսուցման ապահովում հաշմանդամների համար։

6) աջակցում հաշմանդամներին՝ ունենալ աշխատանք կազմակերպությունում ձեռք բերած մասնագիտություններով։

7) ընտանիքի և հիվանդի ուսուցման կազմակերպում հաշմանդամությունը կամ դրա պատճառ հանդիսացող հիվանդությունը կառավարելի դարձնելու համար։

8) հաշմանդամային սպորտի զարգացում կազմակերպությունում և հանրապետությունում։

9) անմիջական կապերի ստեղծում աշխարհի նմանատիպ կազմակերպությունների և մասնագետների հետ՝ հետագա համագործակցության ակնկալիքով։

13. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) ախտորոշիչ ծառայությունների կազմակերպում։

2) բուժական և կանխարգելիչ աշխատանքների կազմակերպում։

3) առողջ ապրելակերպի քարոզչության իրականացում։

4) հիվանդների սննդի կազմակերպում։

5) բժշկական կադրերի և միջին բուժանձնակազմի ուսուցման, վերապատրաստման և կատարելագործման կազմակերպում։

6) համակարգչային դասընթացների կազմակերպում։

7) ջրաբուժության և բուժական ֆիզկուլտուրայի դասընթացների կազմակերպում։

8) հոգեբանի և լոգոպեդի ծառայությունների կազմակերպում։

9) կազմակերպությունում հաշմանդամների կողմից ստեղծված արվեստի և արհեստի աշխատանքների իրացում։

14. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա։

15. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է կազմակերպության աշխատակիցների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և կազմակերպության համար նոր գույք և սարքավորումներ ձեռք բերելու նպատակով։ Շահույթի հաշվին կազմակերպությունը կարող է աշխատանքային պայմանագրով վարձակալել անհրաժեշտ մասնագետների։ Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը։

16. Պետական բյուջեով կազմակերպության համար ուղղակի նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից պետությանը մատուցվող

ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

17. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

### **III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ**

18. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ՝ հիմնադրման մասին հիմնադրի որոշմամբ սահմանված չափով հանձնված գույքից, հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

19. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքի, հիմնադրի որոշումների և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

20. Կազմակերպության սեփականության պահպանման պարտականությունը կրում է կազմակերպությունը:

21. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

22. Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

23. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավել չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են հիմնադրի սեփականությունը:

24. Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

25. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

### **IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ**

26. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և իր կանոնադրությանը համապատասխան՝ կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ:

27. Կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում են հիմնադրի, իսկ հիմնադրի կողմից ուղղակի նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

28. Կազմակերպության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, եթե Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

29. Արցախի Հանրապետությունում կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, օրենքով սահմանված կարգով, ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

## V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

30. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից լիազորված պետական մարմինը և կազմակերպության գործադիր մարմինը:

31. Կազմակերպության հիմնադիրն է Արցախի Հանրապետությունը՝ ի դեմս Արցախի Հանրապետության կառավարության:

32. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

33. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը.

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) կազմակերպության կանոնադրության հաստատումը և նրա մեջ փոփոխությունների կատարումը.

5) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

6) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

7) կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

34. Հիմնադրի որոշմամբ սույն կանոնադրության 33-րդ կետի 3-րդ, 5-րդ և 7-րդ կետերով նախատեսված լիազորությունները հիմնադիրը վերապահել է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

35. Լիազորված պետական մարմինն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ կատարման համար:

36. Լիազորված պետական մարմինը, բացի սույն կանոնադրության 33-րդ կետի 3-րդ, 5-րդ և 7-րդ ենթակետերում և 35-րդ կետում նշվածից, ունի հետևյալ լիազորությունները՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս նրա գույքի վարձակալության հանձնման, օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ գույքի օտարման համար.

7) համաձայնություն է տալիս կազմակերպության կողմից խոշոր գործարքներ կնքելու համար.

8) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

37. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը, որը նշանակվում և ազատվում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմնի կողմից, եթե հիմնադրի որոշմամբ այլ բան չի նախատեսված:

38. Կազմակերպության գործադիր տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումները, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

39. Կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում, նրան նշանակված մարմնի գրավոր որոշման համաձայն, այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

40. Կազմակերպության գործադիր տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից և ներկայացնում է նրա շահերը, կնքում գործարքներ.

2) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը՝ այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

7) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների լիազորությունները.

8) հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

9) նշանակում է կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին և նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր.

10) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

11) իրականացնում է օրենսդրությունը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմինների չվերապահված այլ լիազորություններ:

41. Գործադիր տնօրենի բացակայության դեպքում վերջինիս լիազորությունները իրականացնում է գործադիր տնօրենի տեղակալը կամ այլ անձ՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի համաձայնությամբ:

42. Կազմակերպության լիազորված պետական մարմնի ղեկավարը, կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները, կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող կազմակերպության:

## **VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

43. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

44. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

45. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

46. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

47. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

48. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

49. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե:»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 ապրիլի 2018թ.

N 295-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԲՅՈՒՐՈ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 91 ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական հիմնարկը պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 91 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության» բառերը.

2) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՒՄ**  
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է միայն առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնելու նպատակով:

2. Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից և դրա գործունեությունը դադարում է լուծարման պահից:

3. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4. Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

5. Կազմակերպությունը պետք է ունենա Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք. կազմակերպության լաբորատորիաները, շրջանային բաժիններն ունեն կլոր հասարակ մաստիկային և մետաղական կնիքներ իրենց անվանումներով: Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

7. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

8. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

9. Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

10. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն

հայերեն կրճատ՝ «ԴՓԲ» ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация «Бюро Судебно-медицинской экспертизы»

ռուսերեն կրճատ՝ «Бюро СМЭ» ГНКО

անգլերեն լրիվ՝ State Non-commercial Organization «Bureau of forensic medical examination»

անգլերեն կրճատ՝ «BFME» SNCO:

11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Վ. Մամիկոնյան 18:

## **II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ**

12. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է՝ Արցախի Հանրապետության դատախազության, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության, Արցախի Հանրապետության ոստիկանության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և դատարանների նպատակներին ծառայող դատաբժշկական փորձաքննությունների կատարումը՝ Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում:

13. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) տնային մահերի դիահերձում.

2) դիակների բալզամացիայի կատարում.

3) դիակների հուղարկավորության նախապատրաստական աշխատանքների իրականացում.

4) բժշկական հետազոտությունների իրականացում.

5) ախտաբանաանատոմիական հերձումներ:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

14. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է կազմակերպության աշխատակիցների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և նոր սարքեր ու տեխնիկական միջոցներ ձեռք բերելու նպատակով: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

15. Պետական բյուջեով կազմակերպության համար ուղղակի նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

16. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

## **III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՁԸ**

17. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ՝ հիմնադրման մասին հիմնադրի որոշմամբ սահմանված չափով հանձնված գույքից, հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

18. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքների, հիմնադրի որոշումների և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

19. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:



20. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

21. Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրն իրավունք ունի ետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:

22. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են հիմնադրի սեփականությունը:

23. Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

24. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

#### **IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱՃՑՈՒՂԵՐԸ**

25. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և իր կանոնադրությանը համապատասխան՝ կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ:

26. Կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում են հիմնադրի, իսկ հիմնադրի կողմից ուղղակի նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

27. Կազմակերպության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը իրականացվում է տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, եթե Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

28. Արցախի Հանրապետությունում կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, օրենքով սահմանված կարգով, ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

#### **V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

29. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությունը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

30. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

31. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը:

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) կազմակերպության կանոնադրության հաստատումը և նրա մեջ փոփոխությունների կատարումը.

5) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

6) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

7) կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

32. Հիմնադրի որոշմամբ սույն կանոնադրության 31-րդ կետի 3-րդ, 5-րդ և 7-րդ ենթակետերով նախատեսված լիազորությունները հիմնադիրը վերապահել է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

33. Լիազորված պետական մարմինը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

34. Լիազորված պետական մարմինը, բացի կանոնադրության 31-րդ կետի 3-րդ, 5-րդ և 7-րդ ենթակետերում և 33-րդ կետում նշվածից, ունի հետևյալ լիազորությունները՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) լուծում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս նրա գույքի վարձակալության հանձնման, օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ գույքի օտարման համար.

7) համաձայնություն է տալիս պետական կազմակերպության կողմից խոշոր գործարքներ կնքելու համար.

8) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է սույն օրենքով, հիմնադրի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

35. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը, որը նշանակվում և ազատվում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմնի կողմից, եթե հիմնադրի որոշմամբ այլ բան չի նախատեսված:

36. Կազմակերպության գործադիր տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումները, սույն կանոնադրության

և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

37. Կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում, նրան նշանակված մարմնի գրավոր որոշման համաձայն, այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

38. Կազմակերպության գործադիր տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից և ներկայացնում է նրա շահերը, կնքում է գործարքներ.

2) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը՝ այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսական միջոցներ և նշանակում կարգապահության տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

7) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

8) հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

9) նշանակում է կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին և նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր.

10) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

11) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմինների չվերապահված այլ լիազորություններ:

39. Գործադիր տնօրենի բացակայության դեպքում վերջինիս լիազորություններն իրականացնում է գործադիր տնօրենի տեղակալը կամ այլ անձ՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի համաձայնությամբ:

40. Կազմակերպության լիազորված պետական մարմնի ղեկավարը, կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները, կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող կազմակերպության:

## **VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

41. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, օրենքով սահմանված կարգով:

42. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

43. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

44. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, օրենքով սահմանված կարգով:

45. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով: Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

46. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե:»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 ապրիլի 2018թ.

N 300-Ն

ք. Ստեփանակերտ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ  
ՍՏԵՂԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության ոստիկանության պետին՝ տասնհինգօրյա ժամկետում Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին ներկայացնել համապատասխան թեկնածուների՝ դատաբժշկական և դատահոգեբուժական հանձնաժողովների կազմերում ընդգրկելու նպատակով:

3. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝ տասնհինգօրյա ժամկետում Արցախի Հանրապետության ոստիկանության պետին ներկայացնել համապատասխան թեկնածուների՝ բժշկական փորձաքննության հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով:

4. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

**Կ Ա Ր Գ**

**ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն պատիժը պայմանականորեն չկիրառելու, կալանավորված անձի նկատմամբ ծանր հիվանդության պատճառով խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության, ինչպես նաև բժշկական՝ ոչ հոգեբուժական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով դատաբժշկական փորձաքննությունը կազմակերպվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ հանձնաժողովային կարգով: Հանձնաժողովի կազմում, պետական կառավարման լիազոր մարմնի անդամներից բացի, որպես անդամ ընդգրկվում է նաև մեկական ներկայացուցիչ Արցախի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) քրեակատարողական վարչությունից և համապատասխան ստորաբաժանումից: Հանձնաժողովի կազմում ներկայացուցիչներն ընդգրկվում են Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝ ոստիկանության պետի ներկայացմամբ:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն ոստիկանության քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակ ճանաչելու, կալանավորված անձի նկատմամբ հոգեկան առողջական վիճակի պատճառով խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության կամ հոգեկան առողջական վիճակի պատճառով պատժից ազատելու, ինչպես նաև բժշկական՝ հոգեբուժական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) կից դատափորձական փորձաքննության հանձնաժողովի կողմից իրականացվող դատափորձական փորձաքննությունը կազմակերպվում է հանձնաժողովային կարգով: Հանձնաժողովի կազմում, պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից բացի, որպես անդամ ընդգրկվում է նաև մեկական ներկայացուցիչ ոստիկանության քրեակատարողական վարչությունից և համապատասխան ստորաբաժանումից: Հանձնաժողովի կազմում ներկայացուցիչներն ընդգրկվում են Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝ ոստիկանության պետի ներկայացմամբ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն ոստիկանության քրեակատարողական հիմնարկում

պահվող անձանց ծանր հիվանդության հետևանքով, բացի հոգեկան առողջական վիճակին վերաբերող խնդիրներից, պատժից ազատելու նպատակով բժշկական փորձաքննությունը կազմակերպվում է ոստիկանության կողմից: Հանձնաժողովի կազմում, պետական կառավարման լիազորմամբ ներկայացուցիչներից բացի, որպես անդամ ընդգրկվում է նաև նախարարությունից: Հանձնաժողովի կազմում ներկայացուցիչն ընդգրկվում է ոստիկանության պետի հրամանով՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի ներկայացմամբ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում քրեական գործ ԸԻԴ N 0090/01/17թ.  
Քրեական գործ ԸԻԴ N 0090/01/17թ.  
Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան  
Դատավորներ՝ Ն.Գրիգորյան  
Կ.Սաղյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 16-ին ապրիլի 2018թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝  
Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

Նախագահությամբ՝ դատավոր Կ.Ղարայանի  
մասնակցությամբ՝ դատավորներ Վ.Հովսեփյանի

Ա.Աբրահամյանի

Ի.Կարապետյանի  
Գ.Գրիգորյանի

քարտուղարությամբ՝ Ի.Արզումանյանի  
մասնակցությամբ՝ մեղադրող Լ.Բարսեղյանի  
պաշտպաններ՝ Վ.Հայրապետյանի  
Ռ.Մարտիրոսյանի

ամբաստանյալի օրինական ներկայացուցիչ՝ Լ.Հասանյանի  
ամբաստանյալ՝ Կ.Հասանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ մեղադրանքի Կամո  
Լյովայի Հասանյանի՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 33-137-րդ հոդվածի 3-րդ մասի  
2-րդ կետով նախատեսված քրեական գործով Արցախի Հանրապետության  
վերաքննիչ դատարանի 2018 թվականի փետրվարի 6-ի որոշման դեմ  
ամբաստանյալ Կ.Հասանյանի, նրա օրինական ներկայացուցիչ Լ.Հասանյանի,  
պաշտպաններ Վ.Հայրապետյանի և Ռ.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

2017 թվականի սեպտեմբերի 1-ին Արցախի Հանրապետության  
նուստիկանության քննչական վարչությունում /այսուհետ՝ Նախաքննության  
մարմին/ ԼՂՀ քրեական օրենսգրքի 33-137-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի  
հատկանիշներով հարուցվել է թիվ 181005.17 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի  
որոշումներով անչափահաս Մարիետտա Ավանեսյանը քրեական գործով



ճանաչվել է տուժող, իսկ նրա հայր Ռոբերտ Ավանեսյանը՝ տուժողի օրինական ներկայացուցիչ:

Նախաքննության մարմնի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ քրեական գործով կասկածյալ Կամո Լյովայի Հասանյանի նկատմամբ ընտրվել է «Մտորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ անչափահաս կասկածյալ Կամո Հասանյանի հայր Լյովա Հասանյանը ճանաչվել է կասկածյալի օրինական ներկայացուցիչ:

Նախաքննության մարմնի 2017 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ Կամո Հասանյանը քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ ու նրան մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 33-137-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ մեղադրյալ Կամո Հասանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն է հարուցվել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ Առաջին աստիճանի դատարան/:

Առաջին աստիճանի դատարանի նույն օրվա որոշմամբ բավարարվել է Նախաքննության մարմնի միջնորդությունը և մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով, իսկ կալանքի տակ պահելու ժամկետը հաշվվել է 2017 թվականի սեպտեմբերի 22-ից:

Քրեական գործը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, 2017 թվականի հոկտեմբերի 23-ին մուտքագրվել է Առաջին աստիճանի դատարան:

Առաջին աստիճանի դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 6-ի դատավճռով Կամո Հասանյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 33-137-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ նշանակվել պատիժ՝ ազատազրկում 4 /չորս/ տարի ժամկետով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու: Պատժի կրման սկիզբը համարվել է 2017 թվականի սեպտեմբերի 22-ը: Կամո Հասանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ:

2017 թվականի դեկտեմբերի 18-ին Առաջին աստիճանի դատարանի վերոնշյալ դատավճռի դեմ՝ պատժի մասով, վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալի շահերի պաշտպան Վ.Հայրապետյանը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2018 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Կամո Հասանյանի վերաբերյալ քրեական գործով Առաջին աստիճանի դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 6-ի դատավճիռը մասնակիորեն՝ պատժի մասով, բեկանվել ու փոփոխվել է և ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 2 /երկու/ տարի 8 /ութ/ ամիս ժամկետով, առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու: Դատավճիռը չբեկանված մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալ Կ.Հասանյանը, նրա օրինական ներկայացուցիչ Լ.Հասանյանը, ամբաստանյալի պաշտպաններ Վ.Հայրապետյանը և Ռ.Մարտիրոսյանը:

Գերագույն դատարանի 2018 թվականի մարտի 26-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

## **2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 6-ի դատավճռով Կամո Լյովայի Հասանյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 33-137-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ նա 2017 թվականի օգոստոսի 22-ին՝ ժամը 11.00-ի սահմաններում, իր սեռական կրքերին խաթարված ձևով հագուրդ տալու նպատակով, ԱՀ Հաղորդի շրջանի Տոդ գյուղի տասնչորս տարին չլրացած բնակչուհի՝ 2010 թվականի հուլիսի 6-ին ծնված Մարիետտա Ռոբերտի Ավանեսյանի հետ ներկայացել է նույն գյուղում գտնվող «Շահենին աղբյուր» կոչվող տեղամաս, որտեղ, օգտվելով վերջինիս տարիքով պայմանավորված անօգնական վիճակից, իր առնանդամը Մարիետտա Ավանեսյանի բերանը մտցնելու ուղղակի դիտավորությամբ մերկացրած վիճակում մոտեցրել է վերջինիս բերանին, սակայն, այդ պահին նշված վայր Գրիգոր Տիգրանի Գրիգորյանի ներկայանալու և ձեռքով մեկ անգամ Կամո Հասանյանի դեմքին հարվածելու արդյունքում հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով:

Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ղեկավարվելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 63-րդ հոդվածի 3-րդ մասով, փաստելով, որ ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է հանդիսանում հանցանք կատարելու պահին անչափահաս լինելը, իսկ ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք չկա, նրա նկատմամբ նշանակել է ազատազրկման հետ կապված պատիժ, չքննարկելով ազատությունից չզրկելու հետ կապված պատժի նշանակման կամ պատժի կրման նպատակահարմարության հարցը:

Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Կ.Հասանյանի շահերի պաշտպան Վ. Հայրապետյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և քննության առնելով ամբաստանյալի կողմից պատժի կրման նպատակահարմարության հարցը, հանգել է այն հետևության, որ վերաքննիչ բողոքը հիմնավոր է մասնակիորեն, և փաստելով, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի կարող ենթարկվել, այնուամենայնիվ գտել է, որ այն ամբաստանյալի նկատմամբ կիրառելի չէ: Մինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասով և հաշվի առնելով, որ «ամբաստանյալն անչափահաս է, դպրոցական, բազմազավակ ընտանիքի երեխա, նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չի

եղել, բնութագրվում է դրականորեն, տուժողի ծնողները 2017թ. նոյեմբերի 9-ին Դատարանին հասցեագրված դիմումով հայտնել են, որ մեղադրյալի հետ հաշտվել են ու չեն ցանկանում, որպեսզի նա ենթարկվի քրեական պատասխանատվության, իսկ նրա նկատմամբ պատիժ նշանակելու դեպքում՝ խնդրել են նշանակել այնպիսի պատիժ, որը կապված չէ ազատազրկման հետ» /տուժողի օրինական ներկայացուցիչը նույնը խնդրել է Վերաքննիչ դատարանի դատական նիստերի ժամանակ/, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ պատժի մասով բեկանել և փոփոխել է ու ամբաստանյալի նկատմամբ նշանակել ավելի մեղմ պատիժ՝ 2 տարի 8 ամիս ժամկետով ազատազրկում: Այսպիսով Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալ Կ. Հասանյանի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ խիստ է, սակայն չի պատճառաբանել, թե ինչու հնարավոր չէ ամբաստանյալի ուղղումը և դաստիարակումն առանց հասարակությունից մեկուսացնելու:

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-8-րդ կետերի, 467-րդ հոդվածի պահանջները, սխալ է մեկնաբանել ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 47-րդ, 59-րդ, 60-րդ, 69-րդ հոդվածների պահանջները, չի կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը, 84-րդ հոդվածի 2-րդ մասը /այն քննարկման առարկա չի դարձրել, ինչը պարտավոր էր անել/:

Ի հիմնավորումն իրենց վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերները, մեջբերելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի բովանդակությունը, նշել են, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը քննելիս պարտավոր է առաջնորդվել ոչ միայն ԱՀ Սահմանադրությամբ, ԼՂՀ քրեադատավարական օրենսդրությամբ, այլև ներպետական նորմերի բաղկացուցիչ մաս հանդիսացող միջազգային իրավունքի ղեկավար դրույթներով:

Բողոքի հեղինակները, վերլուծելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 84-րդ, 90-րդ հոդվածները, եզրահանգել են, որ ԼՂՀ միակողմանի միջազգային նորմերի կիրառելիությանը միանալը պարտավորեցնում է դատարանին անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելու հարցում ղեկավարվել միջազգային նորմերով ու սկզբունքներով: Ըստ բողոքի՝ միջազգային նորմերով ինչպես ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի, այնպես էլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառելիության վերաբերյալ որևէ սահմանափակում նախատեսված չէ, այլ գոյություն ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնց պայմաններում միայն դատարանը կարող է կիրառել կալանքի կամ ազատազրկման հետ կապված պատիժ:

Բողոքաբերները, վկայակոչելով և վերլուծելով միջազգային մի շարք իրավական ակտեր, այդ թվում նաև ՄԱԿ-ի ղեկավար դրույթները, ՄԱԿ-ի ուղեցույցը անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելման մասին, 1985թ. ՄԱԿ-ի կողմից հաստատված «Պեկինյան կանոնները», «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, հանգել են այն հետևության,

որ նշված միջազգային փաստաթղթերի բովանդակությունից բխում է, որ երեխաների նկատմամբ ազատագրելու նշանակելը պետք է դիտարկել որպես ծայրահեղ միջոց և այն պետք է նշանակել հնարավորինս կարճ ժամանակով:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերները հիմնավորել են ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը, ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կամ կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը կամ գործը վերադարձնել ստորադաս դատարան՝ նոր քննության:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանների կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքի և սահմանների շրջանակներում վերանայելով Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն. որոշումը պետք է մասնակիորեն բեկանել և փոփոխել՝ ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Արցախի Հանրապետության Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ որևէ հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից օրենքի համաձայն»:

Սույն գործով Գերագույն դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար

լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Իսկ ԼՂՀ քրեական օրենսգրքի՝ «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Վերը նշված իրավանորմերի և քրեական օրենսդրության խնդիրները և սկզբունքները սահմանող մյուս իրավանորմերի /օրինակ՝ 5-րդ, 11-րդ հոդվածներ/ վերլուծությունից հետևում է, որ պատիժ նշանակելը քրեական գործերով արդարադատության իրականացման կարևոր և պատասխանատու բաղկացուցիչ մասերից մեկն է, և պատիժ նշանակելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ սկզբունքներով՝ 1/ օրինականության, 2/ արդարության, 3/ պատժի անհատականացման, 4/ մարդասիրության:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ըստ էության վճռաբեկ բողոքում բարձրացվել է անչափահասի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության հարցը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս դատարանը, ի թիվս այլ հարցերի, լուծում է հետևյալ հարցը. ամբաստանյալը արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ յուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելու վերաբերյալ դատարանի որոշումը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հիմնված լինի կատարված հանցագործության առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը: Իսկ ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Գերագույն դատարանը փաստում է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, քրեաբանական և քրեաիրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը /ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը և այլն/:

Ըստ ԼՂՀ քրեական իրավունքի՝ անչափահաս են համարվում հանցանք կատարած տասնչորսից տասնութ տարեկան անձինք:

ԼՂՀ քրեական օրենսգիրքը 5-րդ բաժնում հատուկ կարգավորման է ենթարկել անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի

հարցերը: Օրենսդիրը նշված բաժնում նախատեսել է անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակները՝ տուգանք, կալանք, որոշակի ժամկետով ազատազրկում նշանակելու առանձնահատկությունները: Մասնավորապես, ԼՂՀ քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածը սահմանափակում է անչափահասի նկատմամբ «որոշակի ժամկետով ազատազրկում» տեսակի պատժի ժամկետները:

Օրենսդիրը ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ բաժնում նախատեսել է նաև դատտիրակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու պայմանները և այլն:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ անչափահասների նկատմամբ նման կարգավորումը պայմանավորված է անչափահասների հանցավորության յուրահատկություններով, որոնք կախված են անչափահասների սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններից: Օրենսդիրը հաշվի է առնում, որ անչափահասը գտնվում է զարգացման փուլում և չի կարող լիովին պատկերացնել կատարված հանցանքի վտանգավորությունն ու ճիշտ կողմնորոշվել կոնկրետ իրադրությունում: Դատարանները պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնեն նաև զգացմունքային, հոգեկան և մտավոր հասունության գործոնները:

Ազատազրկումը անչափահասների համար նախատեսված պատժի տեսակներից ամենախիստն է՝ չնայած տվյալ դեպքում ևս նրանց համար օրենքով սահմանված են որոշակի արտոնություններ: Նշված պատժի կիրառման դեպքում անչափահասները կտրված են լինում սովորական տնային պայմաններից, դպրոցից կամ շրջապատից, ինչը որոշակի բացասական ազդեցություն է թողնում նրանց բարոյահոգեբանական ձևավորման վրա: Գերագույն դատարանը գտնում է, որ անչափահասի ռեալ ազատազրկումը պետք է դիտել որպես պատժի ծայրահեղ միջոց, որը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ դատարանի կարծիքով ոչ մի այլ միջոց չի կարող դրական արդյունք տալ:

Վերլուծելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված իրավական նորմը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նշված նորմում չի տարանջատել հանցագործության սուբյեկտների՝ ըստ տարիքի /ինչպես օրենսգրքի 139-րդ, 140-րդ հոդվածներում՝ տասնութ տարին լրացած անձի կողմից կատարելը/, իսկ ԼՂՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն նման հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվության է ենթարկվում 14 /տասնչորս/ տարին լրացած անձը /ամբաստանյալ Կ.Հասանյանը հանցագործությունը կատարել է 15 տարեկանում/:

Գերագույն դատարանը փաստում է, որ դատարանները պետք է հաշվի առնեն, որ օրենսդիրը հատուկ նորմ է սահմանել չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս: Այսպես, ԼՂՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանել է, որ հանցափորձի համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել նույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը: Այսինքն՝ օրենսդիրը հանցափորձի համար նախատեսել է ավելի մեղմ պատժի նշանակում, քան ավարտված հանցագործության համար, և յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարանները

պետք է անհատական մոտեցում ցուցաբերեն՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

ԼՂՀ քրեական օրենսգրքի՝ «Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները» վերառությամբ 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը օրենսդիրը համարել է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք և նշված հանգամանքը պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների շարքում տեղադրել երկրորդ տեղում, դրանով ընդգծելով այդ հանգամանքի կարևորությունը:

ԼՂՀ քրեական օրենսգրքի՝ «Պատիժը պայմանականորեն չկիրառելը» վերառությամբ 69-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված է. 1. Եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: 2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ԼՂՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել: Այսինքն՝ ամբաստանյալի կողմից կատարված հանցագործությունն առանձնապես ծանր հանցագործությունների շարքին դասելն ինքնին նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը բացառող հանգամանք չէ: Պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց իրական /ոեալ/ պատիժ կրելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ «ամբաստանյալն անչափահաս է, դպրոցական, բազմազգազգակ ընտանիքի երեխա, նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չի եղել, բնութագրվում է դրականորեն, տուժողի ծնողները 2017թ. նոյեմբերի 9-ին Դատարանին հասցեագրված դիմումով հայտնել են, որ մեղադրյալի հետ հաշտվել են ու չեն ցանկանում, որպեսզի նա ենթարկվի քրեական պատասխանատվության, իսկ նրա նկատմամբ պատիժ նշանակելու դեպքում խնդրել են նշանակել այնպիսի պատիժ, որը կապված չէ ազատազրկման հետ» /տուժողի օրինական ներկայացուցիչը նույնը խնդրել է Վերաքննիչ դատարանի դատական նիստերի ժամանակ/, և գտնելով, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից ամբաստանյալ Կ. Հասանյանի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ խիստ է, ու մեղմացնելով պատժի չափը, անհիմն է հանգել ամբաստանյալ Կ. Հասանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության մասին հետևության /մանավանդ որ ամբաստանյալն արդեն կրել է պատժի՝ ազատազրկման ձևով մոտ 7 ամիսը/: Գերագույն դատարանի կարծիքով, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, պետք է հնարավորություն տալ ամբաստանյալին առանց հասարակությունից մեկուսացնելու պայմաններում՝ համապատասխան

մարմինների հսկողության ներքո, ուղղվելու և դաստիարակվելու, դրանով իրագործելով պատժի նպատակները անչափահասի նկատմամբ: Հետևաբար, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը՝ այդ մասով չի կարող համարվել հիմնավորված և պատճառաբանված:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Գերագույն դատարանը դատավարության մասնակիցների նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հարցի լուծման ընթացքում ղեկավարվում է նույն օրենսգրքի 415-րդ և 416-րդ հոդվածների կանոններով:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը» վերտառությամբ 413-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ կետերի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝

2) ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը...

4) դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին...

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը» վերտառությամբ 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը քրեական օրենքի կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման, կամ այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումն է, որը ենթակա էր կիրառման, կամ քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի սխալ մեկնաբանումն է, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Նշանակված պատժի անհամապատասխանությունը հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին» վերտառությամբ 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում է կամ խստացնում պատիժը՝ ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով:

Ինչ վերաբերում է ամբաստանյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի կիրառման մասին վճռաբեկ բողոքի փաստարկներին, ապա Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի համաձայն նման միջոցը կիրառվում է առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ, և նշված իրավանորմը չի կարող ենթարկվել լայն մեկնաբանության:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն. «1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսդրությունը բաղկացած է սույն օրենսգրքից: Քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգր-



քում: 2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա:»:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արձանագրված խախտումը հիմք է տալիս Վերաքննիչ դատարանի որոշումը՝ ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը չկիրառելու մասով, բեկանելու և փոփոխելու համար, այսինքն՝ պետք է կիրառել Գերագույն դատարանի լիազորությունը, նախատեսված ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Գերագույն դատարանը մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է համապատասխան ստորադաս դատարանի ակտը, եթե համապատասխան ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի համաձայն՝ ...պատիժը պայմանականորեն չկիրառելու, ... դեպքում, եթե ամբաստանյալը կալանքի տակ է գտնվում, դատարանը նրան անհապաղ ազատում է կալանքից դատական նիստի դահլիճում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-440-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Ամբաստանյալ Կ.Հասանյանի, նրա օրինական ներկայացուցիչ Լ.Հասանյանի, պաշտպաններ Վ.Հայրապետյանի և Ռ.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

ԱՀ վերաքննիչ դատարանի 2018 թվականի փետրվարի 6-ի որոշումը՝ պատժի մասով, Կամո Լյովայի Հասանյանի նկատմամբ մասնակիորեն բեկանել և փոփոխել:

Կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 5 /հինգ/ տարի ժամկետով:

Կամո Լյովայի Հասանյանի վարքի նկատմամբ հսկողությունը դնել ԱՀ ոստիկանության և անչափահասների գծով հանձնաժողովի վրա:

Կամո Լյովայի Հասանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը վերացնել և նրան անհապաղ ազատ արձակել դատական նիստերի դահլիճում:

Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	<u>ստորագրություն</u>	Կ.ՂԱՐԱՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
		Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
		Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

դատավորներ՝ Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ամբաստանյալ Կամո Լյովայի Հասանյանի վերաբերյալ քրեական գործով Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի 16.04.2018 թվականի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

ք. Ստեփանակերտ

16-ին ապրիլի 2018թ.

Նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալ Կամո Հասանյանին ԼՂՀ քրեական օրենսգրքի 33-137-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2017թ. օգոստոսի 22-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, իր սեռական կրքերին խաթարված ձևով հագուրդ տալու նպատակով, ԱՀ Հաղորդի շրջանի Տոդ գյուղի տասնչորս տարին չլրացած բնակչուհի՝ 2010թ. հուլիսի 6-ին ծնված Մարիետտա Ավանեսյանի հետ ներկայացել է նույն գյուղում գտնվող «Շահենին աղբյուր» կոչվող տեղամաս, որտեղ, օգտվելով վերջինիս տարիքով պայմանավորված անօգնական վիճակից, իր առնանդամը Մարիետտա Ավանեսյանի բերանը մտցնելու ուղղակի դիտավորությամբ մերկացրած վիճակում մոտեցրել է վերջինիս բերանին, սակայն, այդ պահին նշված վայր Գրիգոր Տիգրանի Գրիգորյանի ներկայանալու և ձեռքով մեկ անգամ Կամո Հասանյանի դեմքին հարվածելու արդյունքում հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով:

Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության Առաջին աստիճանի դատարանի 2017թ. դեկտեմբերի 6-ի դատավճռով Կամո Հասանյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 33-137-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ նշանակվել պատիժ՝ ազատազրկում 4 /չորս/ տարի ժամկետով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու: Պատժի կրման սկիզբը համարվել է 2017թ. սեպտեմբերի 22-ը: Կամո Հասանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ:

2017թ. դեկտեմբերի 18-ին Առաջին աստիճանի դատարանի վերոնշյալ դատավճռի դեմ՝ պատժի մասով, վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալի շահերի պաշտպան Վ.Հայրապետյանը:

ԱՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2018թ. փետրվարի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Կամո Հասանյանի վերաբերյալ քրեական գործով Դատարանի 2017թ. դեկտեմբերի 6-ի դատավճիռը մասնակիորեն՝ պատժի մասով, բեկանվել և փոփոխվել է, և ամբաստանյալ Վ.Հասանյանի նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 2 /երկու/ տարի 8 /ութ/ ամիս ժամկետով, առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու: Դատավճիռը չբեկանված մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալ Կ.Հասանյանը, նրա օրինական ներկայացուցիչ Լ.Հասանյանը, ամբաստանյալի պաշտպաններ Վ.Հայրապետյանը և Ռ.Մարտիրոսյանը:

Գերագույն դատարանի 2018թ. մարտի 26-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքը բերվել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 425-րդ հոդվածի 2.2-րդ մասի և 430-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Բողոքի հեղինակները փաստել են, որ Դատարանը խախտել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-8-րդ կետերը, 467-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 47-րդ, 59-րդ, 60-րդ և 69-րդ հոդվածները, չի կիրառել նույն օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը և 84-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտը հիմնավորել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, 47-59-րդ հոդվածների 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 69-րդ և 88-րդ հոդվածների օրենսդրական պարզ շարադրանքի վերլուծությամբ:

Ըստ բողոքաբերների՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 14-րդ գլխի նորմերն անչափահասների նկատմամբ նշանակված պատժի նպատակների մասին որևէ դրույթ չեն պարունակում, ուստի ստորադաս դատարաններն օրենքի ուժով պարտավոր են եղել ղեկավարվել միջազգային կոնվենցիաներով և Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից սահմանված մի շարք ղեկավար սկզբունքներով, մասնավորապես՝ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով, «Անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելման մասին» ՄԱԿ-ի ուղեցույցով /Ռիադյան ուղեցույց, 1990թ./, «Անչափահասների արդարադատության կազմակերպման մասին» 1985թ. Պեկինյան կանոններով և այլն:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ բողոքի հեղինակները խնդրել են ամբաստանյալ Կամո Հասանյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2018թ. փետրվարի 6-ի որոշումը բեկանել և փոփոխել ու նրա նկատմամբ կիրառել դատախարակչական բնույթի հարկադրական միջոցներ կամ կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Գերագույն դատարանի 2018թ. ապրիլի 16-ի որոշմամբ ամբաստանյալ Կ.Հասանյանի, նրա օրինական ներկայացուցիչ Լ.Հասանյանի, պաշտպան Վ.Հայրապետյանի և Ռ.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն. Վերաքննիչ դատարանի 2018թ. փետրվարի 6-ի որոշմամբ՝ պատժի մասով, ամբաստանյալի նկատմամբ մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է: Կիրառվել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը և նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

Ամբաստանյալ Հասանյանի վարքի նկատմամբ վերահսկողությունը դրվել է ԱՀ Ոստիկանության անչափահասների գծով հանձնաժողովի վրա:

Ամբաստանյալ Հասանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը վերացվել է և նա անհապաղ ազատ է արձակվել դատական նիստերի դահլիճում:

Վերաքննիչ դատարանի որոշումը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Գերագույն դատարանն իր որոշման մեջ պարզունակ շարադրելով ԱՀ Սահմանադրության 61-րդ և 71-րդ հոդվածների, ԼՂՀ քրեական օրենսգրքի 1-ին, 10-րդ, 23-րդ, 47-րդ, 59-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 69-րդ, 71-րդ, 88-րդ, 90-րդ, 137-րդ, 139-րդ, 140-րդ հոդվածների և նույն օրենսգրքի 5-րդ բաժնի նորմերը, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-417-րդ ու 424-րդ հոդվածների պահանջները, եզրակացրել է, որ Վերաքննիչ դատարանն «անհիմն է հանգել ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության մասին հետևության /մանավանդ, որ ամբաստանյալն արդեն կրել է պատժի՝ ազատագրված ձևով 7 /յոթ/ ամիս:

Գերագույն դատարանի կարծիքով, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, պետք է հնարավորություն տալ ամբաստանյալին առանց հասարակությունից մեկուսացնելու պայմաններում՝ համապատասխան մարմինների հսկողության ներքո, ուղղվելու և դաստիարակվելու, դրանով իրագործելու պատժի նպատակներն անչափահասի նկատմամբ:

Հետևաբար, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը՝ այդ մասով չի կարող համարվել հիմնավորված և պատճառաբանված»:

Գտնում ենք, որ Գերագույն դատարանի որոշման պատճառաբանական մասի եզրահանգումները չէին կարող բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի բողոքարկված դատական ակտը մասնակիորեն բեկանելու ու փոփոխելու համար, ուստի սույն հատուկ կարծիքով հայտնում ենք մեր անհամաձայնությունը Գերագույն դատարանի 2018թ. ապրիլի 16-ի որոշման ինչպես եզրափակիչ մասի, այնպես էլ պատճառաբանական մասում առկա եզրահանգումների հետ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոքում բարձրացված առանցքային հարցի ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալի նկատմամբ միջազգային իրավունքի նորմերը չկիրառելու վերաբերյալ, որին Գերագույն դատարանն ընդհանրապես չի անդրադարձել, հայտնում ենք հետևյալը.

ԼՂՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԼՂՀ քրեական օրենսգրքը հիմնվում է ԱՀ Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԼՂՀ տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է ԱՀ Սահմանադրությամբ, ԼՂՀ միջազգային պայմանագրերով, նույն օրենսգրքով, ԱՀ դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: ԱՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ԱՀ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային

պայմանագրերի նորմերը: Սահմանադրական այս նորմը սահմանում է ԱՀ միջազգային պայմանագրերի և օրենքների կարգավիճակն ԱՀ իրավական համակարգում: Նշված պայմանագրերը և օրենքներն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Ինչպես նկատելի է Սահմանադրության 93-րդ հոդվածի 8-րդ կետից, Հանրապետության նախագահը... ստորագրում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացման է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ դադարեցնում է վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը: Մեկնաբանվող սահմանադրական դրույթը փաստի ուժով /*ipso facto*/ բացառում է մինչև համապատասխան ներպետական ընթացակարգերն անցնելն ԱՀ կողմից որևէ միջազգային պայմանագրի կիրառման հնարավորությունը: Այդ դրույթով է պայմանավորված նաև ԱՀ Գերագույն դատարանի լիազորությունը՝ մինչև միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունն ԱՀ Սահմանադրությանը որոշելու առնչությամբ:

Արցախի Հանրապետությունը վճռաբեկ բողոքում մատնանշված միջազգային կոնվենցիաներից որևէ մեկը չի վավերացրել կամ հաստատել:

Հետևաբար, անհիմն է վճռաբեկ բողոքի այն պատճառաբանությունը, որ ստորադաս դատարանները բողոքարկվող գործով անչափահաս Կ.Հասանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս օրենքի ուժով պարտավոր են եղել ղեկավարվել միջազգային կոնվենցիաներով և ՄԱԿ-ի կողմից սահմանված մի շարք ղեկավար սկզբունքներով: Միաժամանակ մենք փաստում ենք, որ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները և նորմերը ԱՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով պետության համար հիմք են ապահովելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Այդ առումով միջազգային իրավունքի տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունեցող «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան ԱՀ Ազգային ժողովի կողմից 2015թ. ընդունվել և հանրապետության նախագահի կողմից վավերացվել է, որի դրույթները, անշուշտ, կիրառելի են ԱՀ դատարանների համար:

Ինչ վերաբերում է ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի դրույթները կիրառելու վճռաբեկ բողոքի խնդրանքին, ապա այդ հարցի կապակցությամբ Գերագույն դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ԼՂՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանների հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, հանցագործության հանգամանքները, եղանակը, նպատակն ու շարժառիթները, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները և այլն: Այս համատեքստում Վերաքննիչ դատարանը, քննարկելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 47-րդ, 60-րդ և 69-րդ հոդվածների պահանջները, հիմնավորված եզրահանգել է, որ

ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում կիսախտվի քրեական օրենսդրությամբ նախատեսված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Մինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժաչափն անարդարացի է՝ ակնհայտ խիստ լինելու պատճառով, ուստի այն մեղմացրել է՝ նշանակելով ազատազրկում 2 /երկու/ տարի 8 /ութ/ ամիս ժամկետով, ինչը միանգամայն բխում է ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի պահանջներից:

Հարկ է նշել, որ Ռուսաստանի դաշնության օրենսդրությունը /ՌԴ քրեական օրենսգրքի 73-րդ հոդված/ արգելում է պատիժը պայմանականորեն կիրառել այն անձանց նկատմամբ, ովքեր սեքսուալ բնույթի գործողությունները կատարել են 14 տարին չըրացած, այսինքն, մանկահասակների նկատմամբ: Այդ համատեքստում չպետք է անտեսվեր, որ ամբաստանյալ Հասանյանը կատարել է առանձնապես ծանր հանցագործություն և համապատասխան ԼՂՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ հանցանքը մանկահասակի... անպաշտպան կամ անօգնական... վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է հանդիսանում:

Այսպիսով, գտնում ենք, որ ամբաստանյալ Հասանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը ԼՂՀ դատական մարմինների համար կարող է վտանգավոր դատական նախադեպ հանդիսանալ՝ պատժի քաղաքականության իրականացման ժամանակ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ, 432-րդ, 426-րդ և 438-րդ հոդվածներով, գտնում ենք, որ ամբաստանյալ Կ.Հասանյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ և 90-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունների՝ ոչ հիմնավոր լինելու մասին բողոքաբերների փաստարկները գործի նյութերից և գործող օրենսդրությունից չեն բխում, Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի բողոքաբերների վճռաբեկ բողոքը պետք է մերժվեր, իսկ Վերաքննիչ դատարանի 2018թ. փետրվարի 6-ի որոշումը թողնվեր օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն հատուկ կարծիքում արտահայտված իրավական դիրքորոշումները:

**ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**





Գերագույն դատարանը 2017թ. օգոստոսի 11-ի որոշմամբ վճարեկ բողոքը բավարարել է մասնակիորեն. բեկանել է Վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 16-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

Առաջին աստիճանի դատարանը 2017թ. դեկտեմբերի 8-ի վճռով հայցը մերժել է:

Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով նշված վճիռը, Վերաքննիչ դատարանը 2018թ. փետրվարի 7-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին աստիճանի դատարանի 2017թ. դեկտեմբերի 8-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ վճարեկ բողոք է ներկայացրել Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

Վճարեկ բողոքին կից բողոք բերող անձը ներկայացրել է միջնորդություն, խնդրելով վճարեկ բողոք ներկայացնելու համար սահմանված 45.450 /քառասունհինգ հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամ գումարի չափով պետական տուրքի վճարումը հետաձգել և անդրադառնալ նշված հարցին վերջնական դատական ակտ կայացնելիս: Ներկայացված միջնորդությունը բավարարվել է Գերագույն դատարանի 2018թ. մարտի 27-ի որոշմամբ և վճարեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճարեկ բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ և 113-րդ հոդվածների պահանջները, ինչը նպաստել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-123-րդ հոդվածների պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքաբերի, գործով ձեռք բերված բավարար վերաբերելի ապացույցներով անվիճելի է այն փաստը, որ տրանսպորտային միջոցները ձեռք են բերվել և օտարվել կողմերի համատեղ ամուսնական կյանքի ընթացքում: Անվիճելի է նաև այն փաստը, որ կողմերի միջև ամուսնական պայմանագիր չի կնքվել, իսկ օրենքով էլ այլ բան նախատեսված չէ: Հետևաբար, ամուսնության ընթացքում ամուսինների կամ նրանցից որևէ մեկի կողմից հատուցման գործարքով ձեռք բերված գույքն ամուսիններին պատկանում է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով, որտեղ բաժինները համարվում են հավասար, որը սահմանված է օրենքով:

Բողոքի հեղինակն իրենց պահանջը հիմնավորում է հետևյալ գրավոր ապացույցներով. ամուսնության գրանցումը հավաստող վկայականով, որից դիտվում է, թե երբ են կողմերն ամուսնացել, ՃՈ պատասխան գրությամբ և կից ներկայացված փաստաթղթերով, որոնցով էլ հաստատվում է, թե երբ և ինչ իրավական հիմքով է տրանսպորտային միջոցը հաշվառվել Պատասխանողի անվամբ և երբ է այն օտարվել:

Բացի այդ, դատարանում բողոքաբերը ցուցմունք է տվել ու նաև հղում կատարել իր կողմից վարկային միջոցներ ներգրավելու և այդ գումարներով ևս մեքենաներ ձեռք բերելու մասին, ինչպես նաև ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը հավանություն չի տվել իր նախկին ամուսնու կողմից տրանսպորտային միջոցների օտարման գործարքներին, որոնք օտարվել են առանց իրեն տեղյակ պահելու և առանց իր համաձայնության:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածները, բողոքաբերը նշել է, որ Պատասխանողը հայցադիմումի պատասխանում չի առարկել իրենց ներկայացրած փաստարկները, իսկ պատասխանից հետևում է, որ նա իրեն համարում է օրենքի շրջանակներում գործած: Պատասխանողն Առաջին աստիճանի դատարան չի ներկայացել, ցուցմունք չի տվել ու որևէ այլ ապացույց չի ներկայացրել:

Բողոքաբերը փաստել է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Տվյալ դեպքում, Պատասխանողի կողմից անօրինական՝ առանց Հայցվորի համաձայնության և իմացության, մեքենաներն օտարելու արդյունքում ինքը զրկվել է՝ իր սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու՝ ԱՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքներից, իսկ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը», սակայն միևնույն ժամանակ համատեղ սեփականության մյուս մասնակցին չի զրկում գույքի՝ իր բաժնի արժեքն իր հայեցողությամբ օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրավունքից, իսկ այն դեպքում, երբ գույքի արժեքը բացակայում է, քանի որ Պատասխանողը միանձնյա է այն տնօրինել, Հայցվորը միանշանակ իրավունք է ձեռք բերում իրեն հասցված վնասը, իր գույքի պակասեցումը պահանջելու այն անձից, ով իր հաշվին անհիմն հարստացել է:

Բողոքաբերի կարծիքով, Հայցվորը զրկվել է իր սեփականությունից, սակայն դատարանի գործողությունների պատճառով կարող է զրկվել նաև գույքի իր բաժնի արժեքը ստանալու իրավունքից, քանի որ նույն սեփականության օբյեկտ հանդիսացող գումարը լրիվությամբ չի հասնում սեփականատիրոջը, ուստի ինքն իր գույքի արժեքը կարող է ստանալ բացառապես ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Ինչ վերաբերում է դատարանի այն հետևությանը, թե գույքն առկա է, թե ոչ, կանխիկ, թե անկանխիկ է պահվում, գտնում է, որ այս դեպքում կարևոր չէ,

քանի որ գումարը միանձնյա տնօրինելով, Պատասխանողն արդեն իսկ առաջացրել է անհիմն հարստացման հիմքը:

Բողոքաբերը շեշտել է նաև, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել սույն գործով 2017թ. օգոստոսի 11-ին կայացված Գերագույն դատարանի որոշման դիրքորոշումներն ու հարցադրումները, դրանով իսկ թույլ տալով նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտում:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2018թ. փետրվարի 7-ի որոշումը բողոքարկվող մասով բեկանել և փոփոխել՝ կայացնելով նոր դատական ակտ՝ հայցը 1.515.000 /մեկ միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամի չափով բավարարելու մասին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԱԲ 008397 ամուսնության վկայականի համաձայն՝ Վազիֆ Մինասյանի և Անահիտ Ավանեսյանի ամուսնությունը գրանցվել է 8.12.2010թ., որի վերաբերյալ Ստեփանակերտի ՔԿԱԳ բաժնում կատարվել է 446 համարի տակ գրանցում:

2. ԱԲ 026420 ամուսնալուծության վկայականի համաձայն Վազիֆ Մինասյանի և Անահիտ Ավանեսյանի ամուսնալուծությունը գրանցվել է 25.10.2016թ., որի վերաբերյալ Ստեփանակերտի ՔԿԱԳ բաժնում կատարվել է 68 համարի տակ գրանցում:

3. 18.03.2015թ. կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վազիֆ Մինասյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող «MITSUBISHI AIRTREK 2.4» մակնիշի ավտոմեքենան 800.000 /ուր հարյուր հազար/ ՀՀ դրամով վաճառել է Լևոն Հովհիսյանին:

4. 18.03.2015թ. կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վազիֆ Մինասյանը Ջոհրաբ Մկրտչյանից 700.000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամով գնել է վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «VAZ 21214» մակնիշի ավտոմեքենան:

5. 22.06.2015թ. կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վազիֆ Մինասյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող «VAZ 21214» մակնիշի ավտոմեքենան 2.530.000 /երկու միլիոն հինգ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամով վաճառել է «ԲԵՅՁ ՄԵԹԸԼՍ» ՓԲ ընկերությանը:

6. 5.09.2016թ. կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վազիֆ Մինասյանը Գևորգ Տերտերյանից 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով գնել է վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «VAZ 21053» մակնիշի ավտոմեքենան: ԼՂՀ ոստիկանության ՃՈ պետի 2.11.2016թ. թիվ 4039 գրության համաձայն՝ նշված ավտոմեքենան հաշվառումից հանվել է 6.09.2016թ.՝ սեփականատիրոջ փոփոխության հետ կապված:

7. ԼՂՀ ոստիկանության ՃՈ պետի 2.11.2016թ. թիվ 4039 գրության համաձայն՝ Վազիֆ Մինասյանի անվամբ 21.02.2009թ. հաշվառված էր «VW GOLF» մակնիշի ավտոմեքենա, որը 9.11.2011թ. հաշվառումից հանվել է՝ սեփականատիրոջ փոփոխության հետ կապված:

8. 29.11.2011թ. Անահիտ Ավանեսյանի և «Արցախբանկ» ՓԲ ընկերության միջև կնքվել է քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման պայմանագիր, համաձայն որի՝ բանկն Ա. Ավանեսյանին տրամադրել է 600.000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի սահմանաչափով վերականգնվող վարկային գիծ՝ մինչև 29.05.2013թ. մարման պայմանով:

9. Կողմերի միջև ամուսնական պայմանագիր չի կնքվել:

10. Ըստ Հայցվորի՝ 2015թ. ապրիլ ամսից ապրում են առանձին և պատասխանող Վագիֆ Մինասյանը տրանսպորտային միջոցների վաճառքից ստացված գումարները տնօրինել է միայնակ ու ոչ մի ֆինանսական ներդրում կամ ծախս չի կատարել ընտանիքի կարիքները հոգալու համար:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Գերագույն դատարանը, վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական ակտերի բեկանման և փոփոխման հիմքերը սահմանված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են՝ 1/ նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, 2/ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, որոնք հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման:

Պարզելու համար, թե վճռաբեկ բողոքի փաստարկները հիմնավոր են, արդյոք, թե ոչ, և Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը ենթակա՞ է, արդյոք, բեկանման, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծել սույն գործով ծագած վեճը կարգավորող իրավական նորմերը:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում

ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական օգտագործման գույքը /հագուստը, կոշիկը և այլն/, բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկանների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում՝ ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միննույն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը: Ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքային զանգվածի մեջ ներառվում են նաև դրամական միջոցները:

Գերագույն դատարանը, հաշվի առնելով նշված առանձնահատկությունը և վերահաստատելով նախկինում հայտնած իր դիրքորոշումը, գտնում է, որ ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի կազմում դրամական միջոցները կարող են ներգրավվել՝ ուղղակիորեն, օրինակ՝ որպես ամուսիններից մեկի աշխատավարձ, շահաբաժին կամ այլ եկամուտ. անուղղակիորեն, որպես այդ գույքային զանգվածի կազմի մեջ մտնող մեկ այլ գույքի համարժեք, օրինակ՝ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի վաճառքից ստացված դրամական միջոցները:

Վերջինիս պարագայում, ըստ էության, տեղի է ունենում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող մի գույքի փոխակերպում մեկ այլ գույքով:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին հոգալու կարգի և /կամ/ անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է ամուսինների /ամուսիններից մեկի/ պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը հանդիսացող գույքի բաժանումը:

Վկայակոչած հոդվածի՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի հետ փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը կարող է բաժանվել, ինչպես ամուսնության ընթացքում, այնպես էլ՝ ամուսնալուծվելուց հետո:

Գերագույն դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում ամուսիններից որևէ մեկի կողմից ընդհանուր համատեղ սեփականություն

հանդիսացող գույքի բաժանման պահանջ ներկայացնելիս՝ որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ պետք է հիմնավորվի բաժանման ենթակա գույքի առկայությունը, այսինքն՝ այն, որ բաժանման ենթակա գույքն օբյեկտիվ իրականությունում գոյություն ունի:

Ընդ որում, վերոհիշյալ փաստի ապացուցման բեռը և դրանից բխող բացասական հետևանքները, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի համաձայն, կրում է այդ փաստը վկայակոչող կողմը:

Միաժամանակ, Գերագույն դատարանը հարկ է համարում հավելել, որ յուրաքանչյուր կոնկրետ վերոնշյալ փաստը պարզելիս դատարանները պետք է հաշվի առնեն նաև բաժանման ենթակա գույքի տեսակը և առանձնահատկությունները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայցվորի և Պատասխանողի ամուսնությունը գրանցվել է 08.12.2010թ., իսկ ամուսնալուծությունը՝ 25.10.2016թ.:

Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում՝ 2010-2016 թվականներին, ամուսինները Վազիֆ Մինասյանի անվամբ ձեռք են բերել և նույն ժամանակահատվածում օտարել են երեք ավտոմեքենա՝ որոնցից առաջինի և երկրորդի «MITSUBISHI AIRTREK 2.4» և «VAZ 21214» մակնիշի ավտոմեքենաների վաճառքի գինը կազմել է համապատասխանաբար՝ 800.000 /ութ հարյուր հազար/ և 2.530.000 /երկու միլիոն հինգ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ, երրորդ՝ «VAZ 21053» մակնիշի ավտոմեքենան նույն ժամանակահատվածում՝ 2016թ. սեպտեմբերի 5-ին գնվել է 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով, իսկ հաջորդ օրը կատարվել է սեփականատիրոջ անվանավիճակում:

Գերագույն դատարանը, 2017թ. օգոստոսի 11-ի որոշմամբ գործը նոր քննության ուղարկելով, մատնանշել է Առաջին ատյանի դատարանի կողմից քննարկման և գնահատման անհրաժեշտություն ունեցող հարցերի շրջանակները, այն է՝ «Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները կողմերի միջև ճիշտ չեն բաշխել ապացուցման բեռի պարտականությունը, չեն հստակեցրել, թե դատավարական որ կողմի վրա է դրվում գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի ապացուցման բեռը, տվյալ պարագայում Վազիֆ Մինասյանը պետք է ապացուցեր, որ Հայցվորի համաձայնությամբ է համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույքն օտարվել, ինչպես նաև Պատասխանողը պետք է ապացուցեր այն, որ օտարված գույքի 1/2 մասի գումարը փոխանցել է Հայցվորին կամ ծախսել է ընտանիքի կարիքների համար, ինչը, սակայն չի կատարվել նրա կողմից»:

Գերագույն դատարանը հարկ է համարում շեշտել, որ Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել Գերագույն դատարանի կողմից նոր քննության ուղարկելու մասին որոշմամբ սահմանված ծավալները և պարզելու ենթակա հարցադրումները և, մերժելով հայցը նաև 2016թ. սեպտեմբերի 5-ին 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով ձեռք բերված «VAZ 21053» մակնիշի ավտոմեքենայի մասով, դրամով իսկ թույլ է տվել դատական սխալ, ինչը հանգեցրել է գործի ըստ էության սխալ լուծման, իսկ Վերաքննիչ դատարանը, լրիվությամբ մերժելով Պատասխանողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքն ու օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի վճիռը, նաև «VAZ

21053» մակնիշի ավտոմեքենայի մասով, համաձայնել է հայտնած դիրքորոշման հետ և անհիմն գտել, որ Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել դատական ակտը բեկանելու համար հիմք հանդիսացող՝ գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ:

Մինչդեռ Գերագույն դատարանն արձանագրում է, որ արդարադատության և կողմերի շահը պահանջում է, որպեսզի գործի փաստական կազմը, այսինքն՝ գործն ըստ էության ճիշտ լուծելու համար նշանակություն ունեցող բոլոր իրավաբանական փաստերը պարզվեն սպառիչ լրիվությամբ: Այդ առումով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Այսինքն՝ մրցակցային քաղաքացիական դատավարությունում դատարանը զբաղեցնում է դատական ղեկավարման և ոչ թե պասիվ դիտորդի դեր:

Քաղաքացիական գործերով ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը սահմանված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Ապացուցման պարտականությունը բաշխելու նշված ընդհանուր կանոնը չի գործում, երբ այն օրենքով /հատուկ կանոնով/ դրվում է որոշակի կողմի վրա, կամ երբ օրենքում ուղղակի ցուցում չլինելու դեպքում, ապացուցման պարտականությունը դրվում է այն կողմի վրա, ով իր շահերից ելնելով, կարող էր կամ պարտավոր էր իրեն ապահովել անհրաժեշտ ապացույցներով /ապացուցողական ենթադրություն կամ պրեզումպցիա/: Ի տարբերություն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում նշված ապացուցման չենթակա հանրահայտ և նախադատելի փաստերի՝ ապացուցողական ենթադրություններն ապացուցման պարտականությունից ազատում են միայն վարույթի կողմերից մեկին, իսկ մյուս կողմը կարող է ապացույցներ ներկայացնել և հերքել ապացուցողական ենթադրությունը, ապացուցել, որ այն իրականում գոյություն չունի:

Վերոնշված դատավարական կանոնները, միևնույն ժամանակ, դատարանին չեն ազատում գործի հանգամանքների ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելու՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված պարտականությունից: Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ դատարանի խնդիրն է յուրաքանչյուր կոնկրետ իրավական խնդրի նկատմամբ կիրառել դրա առանձնահատկություններին համարժեք իրավական պահանջները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատված ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Ամփոփելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին աստիճանի դատարանը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի իրականացրել, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները՝ Գերագույն դատարանի 2017թ. հուլիսի 28-ի որոշմամբ հայտնած դիրքորոշումների շրջանակներում պատշաճ իրավական գնահատման չի արժանացրել հայցապահանջը և գործում առկա ապացույցները նաև 2016թ. սեպտեմբերի 5-ին 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով ձեռք բերված «VAZ 21053» մակնիշի ավտոմեքենայի մասով, իսկ այդ խախտումներն անտեսվել են Վերաքննիչ դատարանի կողմից, ինչն էլ անվիճելիորեն ազդել է գործի ելքի վրա:

Այսինքն, վճռաբեկ բողոքի փաստարկները՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ, 113-րդ, 121-123-րդ հոդվածների պահանջները ստորադաս դատարանների կողմից խախտելու մասին, Գերագույն դատարանը համարում է հիմնավոր:

Նման պայմաններում Գերագույն դատարանը փաստում է, որ ավտոմեքենայի վաճառքից ստացված գումարները ստացել է Պատասխանողը, ով Առաջին աստիճանի դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանում հայտնել է, որ նշված դրամական միջոցները ծախսվել են համատեղ ամուսնական կյանքի ընթացքում՝ ընտանիքի կարիքները հոգալու համար, և որ Հայցվորի բացատրության համաձայն՝ 2015թ. ապրիլ ամսից իրենք ապրում են առանձին ու Պատասխանողն այդ ընթացքում որևէ ֆինանսական ներդրում և ծախս չի կատարել երեխաների ապրուստը հոգալու համար, իսկ համատեղ սեփականություն հանդիսացող ավտոմեքենաներն օտարվել են Պատասխանողի կողմից առանց իր համաձայնության և իմացության: Պատասխանողը որևէ առարկություն, իր դիրքորոշումը հիմնավորող և, միաժամանակ, Հայցվորի պնդումները հերքող որևէ ապացույց չի ներկայացրել:

Սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և փոփոխելու համար հայցը՝ 2016թ. սեպտեմբերի 5-ին 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով ձեռք բերված «VAZ 21053» մակնիշի ավտոմեքենայի արժեքի 1/2 պահանջի մասով բավարարելու վերաբերյալ:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված լիազորությունը ու մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը ու հայցը մասնակիորեն բավարարել, քանի որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ՝ առանց գործն ուղարկելու նոր քննության, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից և համահունչ է ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:



Այսպիսով, Գերագույն դատարանը, հաշվի առնելով, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման, գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2017թ. դեկտեմբերի 8-ի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2018թ. փետրվարի 7-ի որոշումը ենթակա է մասնակիորեն բեկանման և փոփոխման, հայցը՝ մասնակիորեն բավարարման:

**5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի առնելով, որ հայցը բավարարվում է մասնակիորեն, կողմերի միջև դատական ծախսերը պետք է բաշխվեն բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն վճարված և դատարանների որոշումներով հետաձգված պետական տուրքի գումարներից:

Հայցվոր Անահիտ Ավանեսյանի կողմից հայցադիմումի համար վճարվել է 38.400 ՀՀ դրամ, վերաքննիչ բողոք ներկայացնելու համար՝ 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամ /սակայն վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա էր 57.450 /հիսունյոթ հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամը/, վճռաբեկ բողոքի համար վճարել է 57.450 /հիսունյոթ հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, նոր քննության արդյունքներով կայացված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի համար վճարել է 45.450 /քառասունհինգ հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար սահմանված պետական տուրքը խնդրել է հետաձգել և անդրադառնալ այդ հարցին վերջնական դատական ակտ կայացնելիս: /Անահիտ Ավանեսյանը ընդհանուր վճարել է 151.300 /հարյուր հիսունմեկ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ, ևս պետք է վճարի Առաջին ատյանի դատարանի վճռով սահմանված 47.450 /քառասունյոթ հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամից 40.000 /քառասուն հազար/ ՀՀ դրամը և վճռաբեկ բողոքի համար հետաձգված պետական տուրքը՝ 38.000 /երեսունուր հազար/ ՀՀ դրամը՝ բավարարված հայցապահանջին համապատասխան/:

Հայցվոր Անահիտ Ավանեսյանից հօգուտ Արցախի Հանրապետության պետք է բռնագանձել 78.000 /յոթանասունուր հազար/ ՀՀ դրամ՝ որից 40.000

/քառասուն հազար/ ՀՀ դրամը՝ վերաքննիչ բողոքի համար չվճարված և 38.000 /երեսունութ հազար/ ՀՀ դրամը՝ որպես վճարելի բողոքի համար հետաձգված պետական տուրքի գումար:

Պատասխանող Վազիֆ Մինասյանից հոգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ վճարված պետական տուրքի դիմաց՝ /5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամը՝ հայցադիմումի, 7.500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը՝ վերաքննիչ բողոքի, 7.500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը՝ վճարելի բողոքի համար վճարված պետական տուրքի դիմաց/:

Պատասխանող Վազիֆ Մինասյանից հոգուտ Արցախի Հանրապետության ենթակա է բռնագանձման 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ՝ /7.500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես վերաքննիչ բողոքի համար չվճարված և 7.500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար հետաձգված պետական տուրքի գումարներ/:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: ԱՀ վերաքննիչ դատարանի 2018թ. փետրվարի 7-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել. հայցը՝ 2016թ. սեպտեմբերի 5-ին 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով ձեռք բերված «VAZ 21053» մակնիշի ավտոմեքենայի արժեքի 1/2 պահանջի մասով բավարարել և պատասխանող Վազիֆ Մինասյանից հոգուտ հայցվոր Անահիտ Ավանեսյանի բռնագանձել 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Հայցվոր Անահիտ Ավանեսյանից հոգուտ Արցախի Հանրապետության բռնագանձել 78.000 /յոթանասունութ հազար/ ՀՀ դրամ՝ որից 40.000 /քառասուն հազար/ ՀՀ դրամը՝ վերաքննիչ բողոքի համար չվճարված և 38.000 /երեսունութ հազար/ ՀՀ դրամը՝ որպես վճարելի բողոքի համար հետաձգված պետական տուրքի գումարներ:

3. Պատասխանող Վազիֆ Մինասյանից հոգուտ Հայցվորի բռնագանձել 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ՝ բավարարված հայցապահանջի համապատասխան վճարված պետական տուրքի դիմաց:

Պատասխանող Վազիֆ Մինասյանից հոգուտ Արցախի Հանրապետության բռնագանձել 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ՝ որպես հետաձգված և չվճարված պետական տուրքի գումար:

4. Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	<u>ստորագրություն</u>	Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԴՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Կ.ՂԱՐԱՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

